— Աւրեմն պատրաստ էք կինս ըլլալու :

— Արդէն ատոր վրայօք խօսած ենք : միայն կը յիշեմ իմ հօրս առջին ձեզի հետ ամուսնալու դաշնադրութիւն ըրած եմ, և այս ալ գիտցիք որ իմ կողմանէ հարկ մը ճանչուած է :

— Այս պայմանն ես ալ աղէկ կը յիշեմ : Օրիորդ, բայց կը կարծէք որ ասի հարկ ըլլայ :

— Այս, կը կարծեմ :

— Աւրեմն ես ալ պատրաստ եմ հետերնիդ ամուսնալու : Բայց, գարձեալ կըսեմ, գիտցիք որ մինչև հայրս չուեմնեմ, չեմ ընդունիր :

Կոմաց յօնքը խորշուեցուց ու շրթունքները խածաւ :

— Օրիորդ, ըստ, իմ գիտաւորութիւնս ձեր կամքը բրունաբարել չէ : թէ որ խօսքերնուու վրայ հաստատ էք, ձեզի կը դարձընեմ զայն : ազատ էք : միայն . . .

Պատուհանին մօտեցաւ ու փողոցը նայելով :

— Միայն, ըստ, նայեցէք :

Այս զօրաւոր ձկողութիւնը որ կրնար մեր թշուաւութիւնն ստուգել, ստիպեց զիս պատուհանին քովիս երթալ, որոն տակը նայեցայ տեսայ որ վերարկուով մարդ մը տունը մօնելու : մինչու մը կրոննէր :

— Սատուած իմ, ըստ Պիտի, երեկ իրիկուն եղաւ արիկայ :

— Այս, կոմն, երեկ իրիկուն ժամը իննին ատենները :

— Նարունակեցէք, ըստ Պիտի :

Վայրկեան մը ետքը ուրիշ մարդ մ' ալ եկաւ, այս վեր չինը ձեռքը լսալու մ' ունէր :

— Ի՞նչ կը խորհիք առ երկու մարդոց վրայ, հարցուց ինչ ձի, ուր Մոնսոր :

— Կը խորհիմ որ առնելու դուքսն ու իր հաւատարիմն էն, պատասխանեցի :

Պիւսի հառաջանք մ'արձակեց :

— Հիմա, շարունակեց կոմոք, հրաման ըրէք. կենամ թէ
երթամ:

Այրիկեան մը խորհեցայ այո՛, իմ հօրս նամակին, եղած
խօստանելոքն, ներկայ զբարի և սպառնալոց վունդին նայե-
լով, այո՛, խորհեցայ, թէ որ այս երկու մարդիկն հոն չը-
բային . . .

— Ոէ, որչափ թշուառ եմ ես, պոռաց Պիւսի, մերար-
կուով մարդը ես էի, և լապոտերը բռնողն ալ Ոէմի ԱՌ Հօ-
տուէնն էր, ձեր բերած երիտասարդ բժիշկը :

— Գո՞ւք էք, պոռաց Տիանա հիացմամբ :

— Այո՛, ես էի, ես, որ իմ յիշատակիներուս իրականու-
թենէն խիստ սաստիկ նեղուած՝ կը ջանայի գանել այն տունն
ուր հիւրենկալուեցայ, այն սենեակն ուր տեղախիստուեցայ,
այն կինն կամ լաւ ևս է տաել հրեշտակն որ ինծի երեւառ :
Ոէ, այս պատճառառ իրտասմբ զիս թշուառ անուանեցի :

Եւ Պիւսի իմանալով որ ինքը պատճառ եղած էր Տիանայի
իր ձեռքը կոմսին տալու, խորին տիգութեամբ մը պահ մի-
բռու կենալով :

— Հիմա, ըսաւ, դուք իր կի՞նն էք :

— Երիկունի է վեր, մատասխանեց Տիանա :

Նորէն տիրեց բռութիւնը որ միայն իրենց թհիթն շնչա-
ռութենէն կը խափանուէր :

— Բայց դուք, հարցուց մէկէն Տիանա, ի՞նչպէս մտար
այս տունը, ի՞նչպէս դտաք այս տեղ :

Պիւսի լուելեայն բանալին ցուցուց :

— Ադ ի՞նչ բանալի է, պոռաց Տիանա, ով տուաւ ձեզի :

— Աւոթախւտ խստացած չէր իշխանին այս իրիկուն զին-
քը հոս բերելու. իշխանը այս իրիկուն Պ. ուր Մանուր և զիս
տեսած էր, ինչպէս Պ. ուր Մանուր և ես ալ զինքը տեսած
էինք. որ և է որոգայթէ մը վախմալով զիս իր տեղը հոն դրիեց :

— Պուր ի՞նչպէս յանձն առիք այս պաշտօնը, ըսաւ Տիա-
նա յանդիմանական ձայնով մը :

— Զեր քովը զ ալու միակ միջոցն այս էր : Հիմա իմ կե-
նացու ամենամեծ ուրախութիւններէն և միանդ ամսոյն ամենա-
մեծ ցաւերէն մէկը գալ իրնառուելուս համար զիս յանդիմա-
նել կուզէք :

— Այո՛, ըսաւ Տիանա, որովհետեւ աւելի աղէկ էր որ զիս
կրկին չտեմնէիր, և չտեմնելովիդ ալ զիս մունացիք :

— Ոչ, Տիկին, կը սխալիք : Էնդ հակառակն Աստուած զիս
հոս զրկեց որ ձեր դլուխը եկած վասնդը աւելի մանրամաս-
նարար իմանամ : Մատիկ ըրէք. ձեզ տեսած վայրիկեանէս կեանքս
ձեզի նուիրեցի : Իմ ընդունած պաշտօնն հիմա պիտի սկսիմ
վարել : Զեր հօրը վրայօք լուր ու վեցիք :

— Այո՛, այո՛, պոռաց Տիանա, քանզի յիշաւի ինչ ըլլադն
չեմ գիտեր :

— Նատ աղէկ, ըսաւ Պիւսի, այդ մասին խօսք կուտամ
ձեզ. միայն կը խնդրեմ որ այս վայրիկեանէն պահէք անանկ
մէկու մը յիշատակը որ ձեզմանը և ձեզի համար պիտի ապրի :

— Բայց այդ բանալի՞ն, ըսաւ Տիանա ան հանդսութեամբ :

— Այս բանալին, ըսաւ Պիւսի, ձեզի կը յանձնեմ և գարձ-
եալ ձեր ձեռքըն առնուլ կուզեմ. և պատույս վրայ կերդ-
նում որ երեկը զոյր մը իր օթեւանին բանալին աւելի անձնուէր
և աւելի մեծարու եղոր մը զիրնար տալ :

— Քաջ Պիւսի խօսքին վրայ կը վատահիմ, ըսաւ Տիա-
նա, առէք :

Եւ բանալին գարձեալ երիտասարդին տուաւ :

— Տիկին, ըսաւ Պիւսի, տամարհին որէն Պ. ար Մանո-
ւոյի ջշմարտապէս ինչ ըլլադը կիմանանէք :

Եւ Տիանան եւանդուն միրով ու խորին տիրութեամբ մը
խառնուած յարդանօք ողջունելով անդուսիէն վար իջաւ :

Տիանա գլուխը գէպի գուռու երկնցուց երիտասարդին
քայլերան ձայնն աւանելու համար, և այս ձայնն երկար տ-
տենէ ի վեր գտպար էր, երբ ինքը միրար բաղիսելով և ար-
տաստարից աչօք տակաւին լսել կը կարծ էր,

Գ Ե Ր Ի Խ Դ :

ՀԵՆԻ Գ. ԻՆ ԽԵՑՅԵՍ ՃՈՆՅՊԱՐԱՐՄՐԻՆԵԼ ԵՒ ՓԱՌ ԶԵՆ ՖՈՒՐԵՆՊ-
Խ ԵՎ ԹԱՅԻ ՀԱՄՅՈՒ ԽԵՆ ԻՆՉ ԱՏԵՆ ՊԵՏՔ Բ. Լ. Ա. Յ. Ե.

Վերոյիշալ դեպքերէն չօրս կամ հինգ ժամ ետքը ժադած
օրը՝ գեղին և հազիւ թէ շիկագոյն ամփի մը ծովերը արծա-
թափայլով արեգակի մը լոյսով Հէնրի Գ. ի Ֆօնմէնալլո ճա-
նապարհորդելը տեսնուեցաւ, ուր ինչպէս ըսինք, հետեւեալ
օրուան համար մեծ որսորդութիւն մը պատրաստուած էր:

Այս ճամփորդութիւնը՝ որ ուրիշէ մալ անտէս ըլլալու էր,
այս իշխանին կենացը բոլը գործերուն նման որուն տէրու-
թիւնն ալ նկարագրեցինք, ընդհակառակն իրեն հետ վարոծ
աղաղակովն ու շարժմամբը մեծ աղմուկ կը հանէր:

Յիրաւի, Լուվրի գետափանցը վրայ, առաջրուան ժամը
ութիւնին ատեները, Քօնին ապարանքին ու Ապֆախու փողո-
ցին մէջ տեղէն խումբ մը ազնուական պաշտօնեաններ գուրա-
ելան աղէկ ձիէրու վրայ հեծած և մուշուկներով լիւաթթուած,
յիւոյ բազմաթիւ արքունական մանուկներ, ասոնց ետեւէն
ժառաներու բազմութիւն մը, և վերջապէս դռնապան ծառա-
ներ, որոնք արքայական կառքին առջեւէն կերթային:

Այս կառքը՝ զօր ութը զարդարուած ջորիներ կը քաշէին,
համառոր յիշատակութեան մարժանի է:

Ասի երկար քառակուսի ձեւ մ'ունէր չորս անիւններու վր-
այ հաստատուած, մէջը բազմույներով ու բարձերով և դուր-
որ ճամփառը կերպասէ վարագոյններով վարդարուած, տաս-
նը հինգ ոտք երկայնութիւն և ութը ոտք լայնութիւն ունէր:
Դժուարին տեղուանքը կամ խիստ անհարժ լեռները ութը
շորիներուն տեղ խելմը եղներ կը լծէին, որոց դանդաղ
բայց զօրաւոր դնացքը թեպէտ ճամփորդութիւնն երկու կամ
երեք ժամ աւելի ուշ կը ձնէր, բայց որոշեալ տեղն հասնելու
ապա ովութիւն կուտար:

Այս կառքին մէջ նստած էին Հէնրի Գ. և բոլը նր առ-
քունիքը բայց թագուհինեն, Լուիլ տը Վաղըմօն անուն, որ
միայն ուստագնացութիւններու և եկեղեցական հանդէնե-
րու ասեն իր ամսւանոյն կընկերամար, որուն վրայ խօսելին ա-
ւելըրդ կը համարիմք:

Աւատի թագուհին մէկ կողմ թողունք ու ըսենք թէ Հէն-
րի Գ. ի ճամփորդութեան ատեն իր արքունիքը որոնցմէ կը-
բաղկանար,

Նախ և առաջ Հէնրի Գ. թագաւորէն, իր Մարք Միրօն
անուն բժիշկէն, մատրանապետէն, որուն անունը չինք գիտեր
ցայժմ. մեր հին բարեկամ Նիքո խեղկառակէն և հինգ վեց
չնորհապարտ ազնուականներէ, որոնք էին, առ ժամն, Քէ-
լիւս, Շօմէրկ, տէրէսնօն, տ Օ և Մօժիրօն. Ասոնցմէ զատ
կային նաև կառքին մէջ երկու մեծ որսորդութեան շուներ,
որոնք յիշեալ մարդոց մէջ տեղը նստելով, պատկերով, ուրքի
վրայ եղնելով, ծունկ չորելով, արմաւկնաւն վրայ կրթընելով
շատ անդամ վայրկեանէ վայրկեան իրենց երկար օձեղէն
զլուկներն անկանոն յօրանշումներով կը սողոսկէին. կողով մը
մէջը շան ձագերով զօր թագաւորը երբեմն ծունկերուն վը-
րայ կառնուր, երբեմն ալ շղթայով մը կամ ժապաւէններով
վիզը կը կախէր:

Մերթ ընդ մերթ՝ յատկապէս յինուած տեսակ մը խցիկէ-
էդ շուն մը գուրս կը հանէին սոխիքը կաթով լցցաւն որով
կողովն եղած բոլը ձագերը կը ջամբէր, և երկու մեծ շու-
ներն ալ, որք իրենց վայելած առամձնաշնորհութեամբ վրայ
ապահով ըլլալով բնաւ նախանձ չին կրեր, կարեկցութեամբ
և իրենց սուր կնճիթը թագաւորին աջ կազմը շաչող մեռելի
դանկերէ կազմուած համբիշին տնկերով անոնց կը նայէին:

Կառքին ձեզունը սոխեկոծ պղնձէ թերերով վանդակ մը
կախուած էր, որուն մէջ աշխարհին ամենազ եղեցիկ տառ-
ըակներն կային, այսինքն՝ ձիւնանաման փետուրներով և կրկին
սև մանեկաննամներով:

Երբ գիտուածով կին մը արքունսկան կառքը մտնէր, առ-

բառուած կրօսուած կտապիկներէն երկու երեք հաստ ալ կտւել-
նար կենդանեաց վախարանը , քանզի կտապիկը ան առեն վեր-
ջին Ալարուայի արքանեաց գեղեցիւ հիներուն սիրելի կեն-
դանին էր .

Ժամ Կուժունի ձեռաւին Հենրի Ռ . ի համար մարմարինէ
փորուած Ասուուածածնի պատուիկը մը կառքին խորը ոտկեցոծ
խցիկի մը մէջ գրուած էր , որ այս տեսածներուն վլայ հիա-
ցամ ցուցընող ակնարիներ կարծես թէ կարծակերիր երկուա-
յին որդւոյն վլայ :

Աւոսի այն առենին և թուականի բոլոր առօրեայ գըր-
ուածքներն ու բոլոր երգիծ արանաւական տաղաչափութիւններն
կրնայինք բորորովին այս կառքին յարմարցընել և զանի Նոյ-
եսն տապան անուաննել :

Թագաւորը կառքին խորը ճիշդ Ասուուածածնի պատուի-
րին խցիկն տակը նասած էր . իր ոտիցը ներքն . Քէլիւս ու
Մօժիրօն ժապաւէններ կը հիւսէին , որ այն ժամանակի երի-
տասարդայ աւելի հանաւոր զբաղմունքներէն մէկն էր , ո-
րացմէ ունանք կարող եղան տասներկու շիւղերով վիխաթ-
ջինել այնախի բաղադրութեամբ մը որ մինչեւ այն առեն չէր
գիտացըուած և վլրջնալ կրկնի չգտնուեցաւ : Շօմպէրկ , ան-
կին մը քաշուած , իր գէնքերուն պատուաւակալ մը կը շիներ
նոր նկարով մը զօր ինքը գտած կը կարծէր , բայց արդէն
գտնուած էր , ուրիշ անկին մը մասորանապեան ու բժիշկը կը
խօսակցէին . ո՞ և ո իրէանն կառքէն գուրս կը նայէին և
առուուանց կանուխ արթնցովի նման շամներուն պէս կը յօ-
րանջի ին :

Աերշապէս Շիքօ կառքին դուռներէն մէկուն քով նասած ,
ուսպերը գուրս երկնցուցած , որպէս զի միշտ պատրաստ ըլլայ
թնելու կամ ենելու իր ուղած պատեն , կերպեր , ծիծաղա-
շարժ բաներ կը պատուի կամ անզ բարուաւութիւններ կընէր ,
և ամէն Գապղիերէն և Վատիներէն պալտստական անուններն

* Եւապէս կը կոչուին այն կապիկները որոնք պահերնուն կը
կախուին կամ կը կապուին , կոճիթին կարծէ եւ զլուինին չարթ :

աղաւաղելով խիստ սմէսաճոյ պնտուններ կտւուար անսնց :
Երբ Շաթէն հրապարակը հասան , Շիքօ տաղմը ոկտու :
Մատրանապետը որ , բնապէս ըսինք , Միրօնի հետ կը խօ-
սակցէր , յմքը խորշում ցընելով ետին դարձաւ :

— Շիքօ , բարեկամա , ըսաւ Նորին Պէհափառութիւնը ,
զգուշացիր . ալնուականներս որէ անցուր , զիս ալ կտոր կտոր
ըրէ , Ասուուածոյ վլայ ինչ կուզէս ըսէ , Ասուուած բարի է ,
բայց եկեղեցւոյ հետ մի՛ շփաթուիր :

— Այդ խորհուրդ էղ չնորհակալ եմ , տղաս , ըսաւ Շիքօ .
չի տեսներ որ յարդի մատրանապետը բժիշկին հետ կը խօ-
սակցի թաղելու համար իրեն դրկած վերջին մեռելին վլայ
և կը բոլզպէ որ այսօր երեք օր է , միշտ կերակուրի ժամանակ-
ները վլնքը կը խոռովէ : Աշ տաղ չեմըներ , ուկիի վլայ կը խօսիս
ասի շատ հին բան է : Հիմա բորորովին նոր երդ մը պիտի
երգեմքեզ :

— Ի՞նչ եղանակաւ , հարցուց թագաւորը :

— Միշտ մի և նոյն , ըսաւ Շիքօ և մկան բերանապիր եր-
գել այսպէս :

Մեր թագաւորը պարտի հարիւր միլիոն .

— Ատկէ աւելի պարուիմ , ըսաւ Հենրի . երդագանձն աղէկ
չ առկրեցուցեր :

Շիքօ նորէն ոկսաւ առանց շլոթութեան :

Հենրի պարտի երիկերիւր միլիոն

Եւ այս պարուուց վճարման համար

Զոր անուականք ըրած հն

Հարկ է գտնել նոր հնարքներ .

Նոր հարկեր և նոր սակեր

Պէտք է թշուառ հպատակաց

Սղկներէն գուրս հանել

Պայ անսնց որ կեանքերնին

Այս հրէշներուն ներքն վարեն

Որը ամեն բան չը ծամած կը կլինա :

— Լաւ , ըսաւ Քէլիւս իր ժապաւէնն հիւսելով . աղջուոր

Ճայն ունիս, Շիքօ, Երկրորդ տունը, բարեկամ:

— Խո Նոյէ, Վաշուա, ըստ Շիքօ տուանց Քէիւսի պատասխանելու, բարեկամներդ արդիէ որ վիս բարեկամ չանուանեն. ասի զիս կը նուաստացընէ:

— Ուտանաւոր խօսէ, Շիքօ, պատասխանեց թագաւորը, արձակդ աղէկ չդար:

— Բարի, ըստ Շիքօ ու սկսաւ:

Իրենց խօսքն ու հագուատոը

Ճիշդ նման է այն կնկանը

Օր իրենց պէս շրայլ հագուած

Գորովանքէ միշտ սնի վախ:

Ախղերնին դիւրաւ կը դարցընէն
Փողպանուն ծալքերուն մէջ.

Արդէն ցրենն ալ աղէկ չէ

Շապիկնին ճերմըլցընելու համար.

Եւ աւելի ընտիր կերպովմը,

Պէտք է օսլայնին բրինձէն լինել:

— Կեցցէս, ըստ թագաւորը, այս բրինձէ օսլան դու չընարեցի՞ր, ո 0 :

Աչ, Տէր արքայ, ըստ Շիքօ, Պ, աղ Աէն-Մէկլէն հընաբեց, որ անյեալ տարի Պ. աղ Մայէնի հարուածներուն տակ մեռաւ, այն թշրւառ հանդուցեալէն մի յափշտակէք այդ պատիւը. ինքը միայն այս օսլային և անոր իր յետագագայդ երթալու համար Պ. աղ Կիզի ըրածին համար կը մեջցը երթալու համար Պ. աղ Կիզի ըրածին համար կը մեջցը երթալու համար. թէ որ այս օսլան իրմէն յափշտակէք, կէս ճամբան պիտի մնայ:

Եւ առանց գիտելու թագաւորին կերպարանքը որ այս յիշողութեան վրայ կը տիրագնէր, Շիքօ շարունակեց:

Իրենց հերքը կարկինով կը խուզուին

Խօսքը միշտ ալնուականներուն վրայ է, աղէկ հասկըցէք, ըստ Շիքօ երգը ընդմիջելով:

— Այս, այս, երգէ, ըստ Շօմպէրի:

Շիքօ նորէն սկսաւ.

Իրենց հերքը կարկինով կը խուզուին

Բայց չէ թէ հաւասար կերպով

Քանզի առջեւնուն մինչև ականջնին

Երկար է, և ետեւնին կարծ:

— Քու երգդ արդէն հին է, ըստ մ' լրէռնօն:

— Հին, Երէկուանն է:

— Ուրեմն այս առատու ձեւը փոխուեր է նայէ:

Եւ ո Երէռնօն իր գդակը հանելով՝ ցուցուց Շիքօյի իր մազերը որ թէ առջին և թէ ետին գրեթէ հսւասար էին:

— Ոհ, ինչ անպիտան դլուխ, ըստ Շիքօ: Եւ շարունակեց:

Սրուեստով շոկած մազերնին

Խէժով որ վա՞ս ոնք կը ցցուէ

Գանգուր ծալքերավ կորոբն.

Եւ թեթև գլուխնուն վրայ

Ետեւնուն գդակ մը գնելով

Աւելի ևս ծալքերավ կը լլան:

Հիմայ չորրորդ տունը պիտի մնյնիմ ըստ Շիքօ. խիստ անպարկեշտ է: Եւ սկսաւ:

Կը խորհի՞ք որ մեր հին Գաղղիացիք:

Որք իրենց արի զէնքերովին

Անչափ ահեղ մարտերու մէջ

Միշտ քաջութեամբ փայլեցան.

Եւ յանուն իրենց յաղթութեամ:

Վատանգաւոր գէազքերու մէջ

Փառաց պոտ զը վայելելով

Շապիկնին օսլայով պնդէին

Իրենց մազերը խոպոպէին

Եւ գէմքերնին ճերմըլցընէին:

— Կեցցէս, ըստ Հէնրի, թէ որ եզրայրս հոս ըլլար, չառ երախտապարտ կը լլար քեր, Շիքօ:

— Եզրայրդ ո՞վէ, տղաս, ըստ Շիքօ. միթէ դիպուածով Յովակի Ֆուլօնն է, աղ Աէնթ-Ժէնիթէվի արքան, որուն

քով ու խստերով կատարելով կերթան եղեր :

— Զէ, ըստ Հէնդի, որ Շիքօյի ամեն խեղիստակութիւններուն կը զիշանեէր : Ֆրանսուան եղածուս համար կը սեմ :

— Ոհ, իրաւոնք տնիս, առի քու Եղբայրոդ է, բայց չէ թէ յԱսուուած, այլ ի սասանայ: Աղէկ, աղէկ, Ֆրանսուայի համար կը սե, որ չորհիւն Ասուուծոյ Գանգզիոյ որդի է . դուքս Պրավանի, Լօթիէկ, Լիւքսենզուրի, Աէլորի, Սալանսօնի, Անժուի, Թուրէնի, Պէսիի, Եվրէօյի և Շաթօթիէսի, կամ Բէրզի, Մանժի, Մէրմանի և Պօֆօրի, կաստկալ Սէնժ-Անժիլի, տէր Ֆրիզի և Մալինի, պաշտպան Պէլճի ական ազատութեան, որոն բնութիւնը թէպէտքիթ մը միայն տուած է, բայց ծազիկն երկուք ըրած է, և որոն վրայ այս քառասողեան ուստանալո՞ն գիտեմ:

Պարոննայիք մի՛ վարմանաք

Ֆրանսուայի երկու քթին վրայ

Քանդի, իրաւամք ինչպէս գործածութեամք

Երկու քիթ պէտք է երկու դէմքին :

Ազնուականներն մկան բարձրածայն խնդալ, վասն զի ա՛ Անժու դուքսը իրենց անձնական թշնամին էր, և այս իշխանին համար խօսած վերտառութիւնը՝ Շիքօյի իրենց դէմ երդած երդի անքը իսկոյն մոռցուց :

Խոկ թակ աւորը որ միշտ այն տանը Շիքօյի անընդհատ երդի աբանութիւններէն բնաւ մաս մը ունեցած չէր, ուրիշներէն աւելի բարձր կը խնդար, մէկէ մը չափանածելով, իր չուներուն շաքար և կարկանդակ տալով և իր եզրօրը ու բարեկամացը համար գործածուած լեզուին վրայ ցաւելով:

Քանկարծ Շիքօ պոտեաց :

— Հէնդի, Հէնդի, առի քաղաքականութեան դէմ ժպիլն ու անխոհեմ բան մ է :

— Ի՞նչ, ըստ թագուարը :

— Ոչ, հաւասար Շիքօի, որ այս բաները ընդունելու չիրանախուժ բա՛ն :

— Ո՞ր բաները ըստ թագուարը հիացած :

Սասուագլութիւնի զրած տանդ ի նշ կը կրես, Հէնդիքէ, զաւակս :

— Զգուշացիք, Տէր արքայ, ըստ Քէլիս, որ չափաթիւն մը կենթադրէր Շիքօ այս քաջզր խօսակցութիւնէն :

— Ի՞նչ ըսել կուզես, Շիքօ, հարցուց թագաւորը :

— Ի՞նչպէս կասորազրես, նայինք :

— Աերդնում յԱսուուած որ . . . կասորագրեմ . . . կասորագրեմ . . . Հէնդիք որը Վալուա :

— Աղէկ, նայեցէք, Պարմոսյք, ըստ Շիքօ, յըէն ըսել մը տար տեսնենք, այս տան երեք զրերան մէջ Ն մը կը նա՞նէք գտնել :

— Անշուշտ, Վալուա Ն ով կսկսի :

— Կտոր մը թուղթ և զրիչ մը առ ձեռքդ, պարոն մատրանագետ, որպէսեաւ անից վերջը թագաւորին անհանը իմ ըսածիս պէս զրելու հա . Հէնդիք որը Վալուա անդրաստառութիւն մ է :

— Ի՞նչպէս :

— Անդրաստառութիւն մը, այս Ներկայիս մէջ թագաւորուզող Նորին Վեհափառութեան ճշմարփու անունը հիմա պիտի ըսկմ ձեզի : Ըսկնք թէ՝ Հէնդիք որը Վալուաի մէջ Ն մը կայ . Ն մը զրեցէք թուղթին վլայ :

— Գրեցինք, ըստու ու Երեխնօն :

— Ի՞նչ չկայ :

— Անշուշտ, Հէնդիք բարին վերջին զիրն է :

— Արշափ չարափիտ են մարդիկ, ըստ Շիքօ, որ մէկմէկու կապուելու համար հաստատուած զրելն իրարմէ զատեր են . Ն մը զրէք Ն բարլ : Եղա՞ւ :

— Ոյս, ըստ ու Երեխնօն :

— Հիմա նայինք թէ Ն մը պիտի գտնենք, կայ, այնպէս չէ, Ա մը, ան ալ կայ . ուրիշ Ն մը, գարձեւալ կայ . վերջապէս Ն մը: Ողէկ կարդալ զիտէս, Նօլարէ :

Կը խստավանից զայն առ ի պատկառամս իմ, ըստ ու Երեխնօն :

— Գնա բանդ, անզգամ, եթէ դիսուածով տգէտ ըլլա.
յիր, բաւական մեծ ազնուութիւն մը կարծէիր :
— Խեղկատակ, ըսաւ ո՛ Եբէրնօն, իր ազգաքամն դործիքը
Եկոփ վրայ վեցընելով :

— Զարկ, բայց հեղէ, ըսաւ Եկրօ :
Տ' Եբէրնօն սկսաւ խնդալու հեգեց :

— Vi-lain, (անպիտան), ըսաւ :

— Լաւ, պոռաց Եկրօ: Կը տեսմե՞ս, Հենրի, ի՞նչպէս սկսանք,
ահաւասիկ մլրուութեան անունդ գտնուեցաւ . կը յուսամոր
եթէ հիմա ընտանեկան անունդ ալ գտնեմ, ինծի թոշակ մը
կը կապես . ինչպէս մեր Շաուլ Թ. եղբայրն Պ. Ամիօֆ ըրաւ :
— Ծեծ պիտի ուտես, Եկրօ, ըսաւ թագաւորը :

— Ազնուականները ծեծելու որոշուած գաւազաններն ու առ
կեց կը բերեն, տղաս, Լեհաստանէն, բսէ տեսմեմ:

— Սակայն և այնպէս ինծի կերեւի, ըսաւ Քէլիւս, որ Պ.
տը Մայէն՝ քեզիր ափրուհին հետ գտած օրը, խեղճ Եկ-
րօս, քու հետդ այն գաւազաններէն չըրկուեցաւ :

— Աս անսանկ հայիր մէ որ միատեղ տեսմելու ենք : Հան-
դարտէ, պարն Քիւրիսո, գործն իր յաջողութիւնը առացաւ :

Եւ Եկրօ ձեռքը ճակտին վրայ դրաւ . ասով կիմացուի որ
այն ատենն ալ գլուխը յիշասակութեան զահ մը կը ճանչէին :

— Զդէ, Քէլիւս, կը տեսմեմ որ քեզի համար ընտանե-
կան անունը պիտի մոռցընէք, ըսաւ ո՛ Եբէրնօն :

— Մի վախնար, ըսաւ. Եկրօ, միտքս է . Պ. որ Կիզի փո-
դով կըսէի . բայց քեզի, Հենրի, ականջէդ ըսելու դոհ պիտի
ըլլամի:

— Բոէ նայինք, ըսէ անունը, ըսին բոլոր երիտասարդներն :

— Մնացած գրերուն մէջ ու ունինք զլսազիր զըէ ատ

շիրը, Նոկարէ :

Տ' Եբէրնօն հնապամդեցաւ :

— Յետոյ Եմը, վերջն ալ Ի մը. ետքն ալ Վալուայի Օ զի-
րը . վերջապէս անուան ու մականուան մէջ տեղը վանկ մը
կայ, զոր քերականագէտք մասնիկ կը կոչէն, և երկու գըէ

բաղկացած է, Օ և Է, ասոնք ալ զիր, Վալուայի ծայրը և մի-
մաց, ան ալ դըէ, ի՞նչ կըւլայ. հեգէ ո՛ Եբէրնօն ՀԵРОԴԵՏ
— Հերոդ (Հերովդէտ), ըսաւ ո՛ Եբէրնօն :

— Անպիտան Հերովդէս եղաւ, ըսաւ թագաւորը
— Ճիշտ, ըսաւ Եկրօ, ամեն օր այդ ստորագրութիւնը կը
դնես դու, տղաս :

Եւ ամօթիսած վախու մը նշանները ցուցընելով՝ ծռեցաւ :

— Պարոն Եկրօ, չափը անցուցիր, ըսաւ թագաւորը :

— Ե՞ս, ըսաւ Եկրօ, եղածէն զատ ուրիշ բան չեմ ըսեր :
Թագաւորներն ասանկ են, իրենց բան մը իմացընելուդ պէս
կը նեղանան :

— Գեղեցիկ ազգաբանութիւն մը ըրիր, ըսաւ թագաւորը :

— Զըլլայ որ ուրանաս, տղաս, ըսաւ Եկրօ . ամի՞ ամիսը
երկու երեք անդ ամ հրէից կարօտ եղող թագաւորի մը հա-
մար աղէկն է :

— Կոէինք, պոռաց թագաւորը, որ այս անզգամը ետքինը
չպիսի կրնայ գտնել : Պարոնայք, լուեցէք, այս կերպով գո-
նէ չպիսի հարկադրուի կրկին ըսելու :

Անմիջապէս խոր լուութիւն մը տիրեց, և այս լուութիւնը
վոր Եկրօ գացած ճամբանուն ու շագրութիւն բնելուն համար
պարտաւոր չըր խախաննելու, քանի մը վայրկեան տեսէց . յե-
տոյ՝ Մօպ: Հրապարակին ամդիի կողմը, Նուայէի փողոցին
անկիւնը, Եկրօ մէկէն կառքէն գուրս ցաթկեց, պահապան-
ները մէկդի ըրաւ և գնայ ծնրագրեց բաւական աղէկ ե-
րեւոյժ ունեցող տան մը անկիւնը որ փողոցին վրայ երկլն-
ցած փայտէ պատշգամի մ ունէր նկարուած պղոտիկ զէրան-
ներու վրայ հասուատուած :

Ո հեթանոս, պոռաց թագաւորը, թէ որ ծնրագրել
կուզես, դոնէ Մէնթ-Փէնվիէլ փաղոցին մեջ տեղը գտնուած
խաշին առջին ծնրագրէ, և ոչ թէ այդ տանը առջին, այդ
տունը եկեղեցի՞է, կամ մէջը սուրբ սեղան կայ :

Պայց Եկրօ բնաւ չըր պատասխանէր . երկու ծունկն ալ
սալայատակին վրայ դնելով՝ բարձր ձայնով այս աղօմքը կը
բ. — 4

ներ, որմէ թագաւորը բառ մը չկարսնցուց աղէկ ականջ դնելուն համար :

* Բարի Աստուած, Աստուած արդար, ահա՛քաջ կը ճանչնամ և բոլոր կեանքիս մէջ ալ պիտի ճանչնամ այս տունը ուր Եիք նեզութիւն կրեց, եթէ ոչ քեզի համար, Աստուած իմ, գէթ քու արարածներէդ մէկուն համար. Եիք բնաւ չի խընդրեց որ դժբաղդութիւն մը պատահի Պ. ուր Մայէնի և Պ. զինքը մարտիրոս ըրու, ոչ ալ Պ. Նիգօլա Տավիսի, որ իր տանջանացը պատճառն էր. Աչ, Տէր, Եիք սպասեց, վասն զի համբերոց է, թեպէտ ոչ խոպառ. և ահա վեց տարի է. որոց մը կը նահանջ էր, որ Եիք Պ. ուր Մայէնի և Պ. Նիգօլա Տավիսի ու իր մէջ բացուած պղտիկ հաշուոյն շահերը կը գիշէ. արդ՝ հարիւրին տասնով, որ օրենաւոր տոկոս է, և թագաւորն ալ այսչափ տոկոսով փոխառութիւն կընէ, եօթը տարուան մէջ գիզուած շահերը դրամագլխոյն կրկնը կրւան. Աւրեմ Աստուած մեծ, արդար Աստուած, Եիքօի տարի մ'ալ համբերութիւն տուր, որ այն խարազանի յիսուն հարուածներն զրա Եիք այս տանը մէջ այն Լորէնցի հուղկար իշխանին և Նորմանստիացի առւերածիդ փաստարանին հրամաններովը ընդունեցաւ և որք Եիքի մարմինէն բէնթ* մը արիւն հանեցին, հարիւր ըլ բան և արիւնն ալ երիւր բէնթի ենէ. անանի որ Պ. ուր Մայէն որչափ ալ գէր ըլլայ, և Նիգօլա Տավիս որչափ ալ երկար, բաւական արիւն և մորթ չունենան Եիքօի վճարելու, և պարտաւորին հարիւրին տանը հինգ կամք քան մասնկանալ, և զ աւազաններու ութսուն կամ ութսունը հինգերորդ. հարուածին տակ հոգինին աւանդեն :

* Յանուն Հօր և Արդւոյ և Հօգւոյն սրբոյ :

— Ամէն, պոռաց թագաւորը:

Եիք զ ետինը համբուրեց, և բոլոր հանդիսաւեմներուն վրայ մեծ հիսցում ձգելով, որոնք այս տեսարանէն բան մը չին հասկընար, գնաց կառքը իր տեղը նստաւ.

* Բէհ, ըստ թագաւորը, որուն աստիճանը, որ երեք տարիէ. ի վեր պիտի այնպատի առանձնաշնորհութիւններէ զրկուած էր

ուրիշներուն նուիրելու յանձն առնելուն համար, գոնէ իրաւունք կուտար իրեն ամեն բան առաջ ինքն իմանալու, թէ հ. Պարոն Եիքօ, ինչո՞ւ այս երկար և եղական մազթանքն ըրիք, ինչո՞ւ խարազանի հարուածներ ընդունեցար, ինչո՞ւ վերջապէս այդ կեղծաւորութիւններն ըրիք պիզծ երեւոյթ ունետող տանը մը առջն :

— Տէր արքայ, ըստ Եիքօ, որովհետու Եիքօ աղուէսի նըման իր արիւնովը շաղախուած քարերը երկար ատեն կը հոտոտէ ու կը համբուրէ, մինչև որ իր արիւնը թափողներուն զլուխները այս քարերուն գէմ շախչախ :

— Տէր արքայ, ըստ Քէլիւ, գրաւ կը դնեմ. Եիքօ, ինչպէս որ Զեր Վեհափառութիւնն ալ լսեց, իր աղօթքին մէջ դուքս տը Մայէնի անունը արտասանեց. ուստի գրաւ կը դնեմ որ այս աղօթքը քիչ մ'առաջ խօսուած դաւազանի հարուածոց հետ վերաբերութիւն ունի :

— Գրաւ գիր Պ. Փագ տը Լէվի, կուն տը Քէլիւ, ըստ Եիքօ, և պիտի շահիս :

— Աւրեմ անանի է, ըստ թագաւորը :

— Ճիշդ է, տէր արքայ, կրկնեց Եիքօ. այս տունը տիրուհի մ'ունէի ես. արդարին բարի և սքանչելի օրիորդ մը : Գիշեր մը որ զինքը տեմելու գացեր էի, նախանձուու իշխան մը տունը շրջապատեց, զիս բռնել տուաւ և անանի սաստիկ ծեծել տուաւ. որ պատուհանին մէջէն անդայ և զայն բանալու ժամանակ չունենալով՝ այս պատշգամբէն փողոցը ցատկեցի: Աւստի, որովհետու չմեւնելս հրաշք մէր, այս տանը առջեւեն անցնելու ատեն, կը ծնրադրեմ և կալօթեմ. և իիշ աղօթքիս մէջ չորհակալ կրլւամ Աստուածոյ այսպիսի փոանգէ մը զիս ազատելուն համուր:

— Ա.հ, թշուառ Եիքօ և դուք որ զայն կը դաստապարտէիք, տէր արքայ. առկայն և այնպէս ինձի կերեւեւ որ Եիքօի այս ըրտծը բարի ըրիասնէի մը վայելուց գործ է:

— Աւրեմ շատ ծեծ կերար, խեղճ Եիքօս :

— Ա.հ, սարսափելի կերպով, տէր արքայ, բայց չէ թէ քու ուղածիդ չափ շատ :

— Ինչպէս չէ :

* Հարանիս թոց չափոյ աման մ'է :

— Ճշմարտապէս չէ, թէ որ քանի մը սրածայր հարուած ներ չընդունէի, չէի ցաւեր :

— Յո՞ւ մեղքերուդ համար .

— Աչ, Պ. առ Տայէնի մեղքերուն համար :

— Ոհ, կիմանամ, քու միտրդ կեսարին մասնել է . . .

— Կեսարին, բնաւ ո՛չ, չվիտինք, աէր արքայ ։ Անօար, մեծ զօրադրուխն է, քաջ պատերազմողն է, անդ բանիկ եղբայրն, այն որ Գաղղիոյ թագաւոր ըլլալ կուղէ . ո՛չ, անի Հէնրի ար Վալուայի հետ հաշիւ ունի, և այս հաշիւը քեզի կը վերաբերի . տպա, պատրքերդ վճարէ, Հէնրի, ես ալ ի՞ն պարտքերս կը վճարեմ:

Հէնրի չէր ախորդէր որ իր հօրեղօրոդւոյն նիփի վրայ խօսք ըլլայ, ուստի Շիքօյի այս բայադարձութիւնն վնաքը անանկ զի ուշացուց որ դէպի Պիսիթու հասան առանց ընդմիշեալ խօսակցութիւննին շարունակելու :

Երեք ժամ ճամբայ ընելով Լուվրէն Պիսիթա հասած էին անանկ որ բարեգուշակներն հետեւեալ երիկունը Ֆօնդէնալոյ հանով կենթագրէին, մինչդ եռ չարագուշակներն զրաւ կը դնէին որ միւս օրն կէսօրուան դէմ միայն կրնան հասնիլ:

Խոկ Շիքօյ կենթագրէր որ բնաւ չպիտի հասնին :

Փարիզէն դուրս ենենան պէս ուղեկիցներն իրենց ուղածին պէս ճամբորդութիւն ըրած երեւցան . առաւօսը բաւական գեղեցիկ էր, հովը թեմի կերպով կը իշեր, և արեք վերջապէս իր ամսեղին քօղը կրցեր էր թափանյել, և կսուեր թէ այս հոկտեմբերի այն գեղեցիկ օրերէն մէկն է, երբ գետինը թափած վերջին տերեւներուն ձայնովը՝ շըագայուններն աշուշնին քաղցր նոյսուածքով մը շնչուլ ամսուաներուն կապուագ ոյն խօրութիւնը կը միսն :

Ահս օրը երեք ժամ անցեր էր, երբ ուղեկիցներն Ժիւ վերի շըալապատին առաջին պարիսպներն հասան : Այս տեղէն, արդէն Լ'Օուժի վրայ շնուած կամուրջն և Քուու-ուը Ֆուանի սպանդուն կը տեսնէին որ իր խօրտիկներուն անուշ հուսն ու իր վառարանին գուարճալի ձայներն իրիկուան քաղցր սիւդին հետ կը խսանէ :

Նիքօի քիթը այս խոհանոցական հատերուն վրայ շուտով յափշտակուեցաւ, կառքէն գուրս ծռելով՝ հեռուէն տեսաւ որ պանդոկին գրանը առջին խել մը վերարկուներու պլլուած մարդիկ կայսած են : Այս մարդոցը մէջ գեր և կարճահասակ մարդ մը կար որուն լոյնավերջ գլխարկը գէմքը բոլորովին կը ծածկէր :

Այս մարդիկը ճամբորդներն տեսածնուն պէս խոկոյն պանդոկի մտան :

Բայց գէր և կարճահասակ մարդը շուտ մը ներս չկրնալ մանելուն համար Շիքօյ տեսաւ զայն : Ուստի պանդոկի մտածին պէս մեր կարքոնն կտոքէն վար ցատկեց, և իր ձին ծռաւայի մը ձեռքէն առնելով որ զայն սանձէն բանած էր, գնաց պատրի մը անկիւնը գիշերուան առաջին մժուժիւններուն մէջ պահուըսեցաւ սպասելով որ ուղեկիցներն ճամբանին շոկեն դէպի կաօն, ուր թագաւորը կուղեր պատկիւլ վերջը՝ երբար վերջին ճիաւորներն աներեւութացան, երբ վարչային սալյաւատակին վրայ կառքին անկիւներուն ձայնն քիչ մը մեղմացաւ, իր թագաւորեան տեղէն եւաւ, և գեղակին ետեւէն դառնաւով՝ պանդոկին զուռը եկաւ, որպէս թէ Ֆօնդէնսպլէն կը դառնար : Պատուհանին առջին զալով՝ Շիքօյ ապակիներէն շուտ մը ներս նայեցաւ տեսաւ որ այն մարդիկն գեռ հօն էին, գէր և կարճահասակ մարդն ալ մէջերնին, որուն մասնաւոր ուշադրութիւն մը նորհերու պատրիւն ըլլալ կիրեւէր : Մինակ, որովհետեւ Շիքօյ այս մարդէն չճանշուիլ վափարելու իրաւունք ունէր, անոր եղած սենեւալը մանելու տեղ, գիմացի սենեակը շիշ մը զինի սիրել տօւաւ, և նոտաւ հօն այսպէս որ մէկը չի կրնայ դռնէն ներս մանել առանց իրմէ տեսնուելու :

Այս սենեակին, Շիքօյ խոհանոցակը մժուժեան մէջ նըստած, կրնար մինչեւ ծինելոյի մը անկիւնը նշմարէլ : Այս անկիւնը՝ աթուտի մը վրայ նառած էր գէր և կարճահասակ մարդն որ անշուշտ որ և հետազոտութենէ մը շվախնակ կարծ երլով՝ վապանի մը բացանշոյի ըշառովը Երկիրը կեր ւցլի էր ուրուն վրա :

աւելցուած խելմը որթերն տաքութիւնն ու լուսաւորութիւնը
կը կրկնապատկէին,

— Խորուած չէր, ըստ Շիքօ, երբ Նօայէի փողոցին տա-
նը առջին արջիք կընէի, ինձի անանի եկաւ որ այս մար-
դուն դարձը իմացայ: Բայց ինչո՞ւ ասանկ գաղտաղ ովի մեր
Հերովդէս բարեկամին մայրաքաղաքը կը գառնայ, ինչո՞ւ ան-
ցած ատենը կը պահուըսի: Ահ, Պիշտոսոս, Պիշտոսոս, մի-
թէ բարի Աստուածն, դիպուածով չպի՞տի չնորհէ ինձի այն
տարին զօր իրմէ խնդրեցի, և զիս չեարծածէս աւելի շուտով
տախքս վճարելու ստիպէ:

Խակոյն Շիքօ ուրախութեամբ տեսաւ որ ոչ միայն իր նըս-
տած աեղէն կընար տեսմել, այլ նաև՝ երբեմն գիտուածով
անխորհրդարար կարդագրուած լողական արդիւնքներէն մէ-
կովը կրնար ալ բան մը լսել: Ասոր վրայ սկսաւ ականչ գնել
այնպիսի ուշադրութեամբ մը՝ որով արդէն կը նայէր:

— Պարսնայր, ըստ գէր և կարճահասակ մարդն իր ըն-
կերներուն, կարծեմ մեխուլու ժամանակ է. վերջն ուշեկ-
ցութիւնն երկար տաեն է որ անցաւ, և կարծեմ հիմա ալ
ճամբան ապահով է:

— Կատարելապէս ապահով, Տէր իմ, պատախանեց ձայն
մը որ սարսափեցուց Շիքօն, և անանկ մարմինէ մը ելսա, ո-
րուն Շիքօ մինչեւ այն տաեն ուշադրութիւն չը բրած, որ
ճիշդ գէր մարդուն աշքին դէմը նստեր էր:

Այս պատախանող մարդուն հասակը իր Տէր իմ կոչած
մարդուն հասակին հակառակ երկար էր. երեսը գեղնած,
բայց միւսինը կարմրափայլ. ինքը ակնածու, սակայն միւսը
յանձնապատճան:

— Ահ, ողարօն Նիքօլա, ըստ ինքնիրեն Շիքօ անձայն
խնդրուի. շատ աղէկ եղաւ: Խիստ տիսուր բազգ պիտի ու-
նենալը թէ որ այս միջամ առանց իրարու հետ երկու խօսք
ընելու ըստմասինք:

Եւ Շիքօ պարսկէց իր գաւաթթը և ստակը վճարեց որ մեկ-
նելու ժամանակին եկա՞ն առենք բան մը վիճը շուշացընէ:

Գուշակութիւնը սխալ չէր, քանզի Շիքօի ուշադրութիւնը
դրաւող եօթը հոգին ալ իրենց տալիքը վճարեցին. կամ լու-
սա գէր և կարճահասակ անձն ամենուն համար վճարեց և ա-
մեն մարդ իր ձին ծառային ձեռքէն տռնելով՝ հեծաւ, և
միատեղ Փարփփի ճամբան բռնելով շուտով իրիկուան տռաջին
մժութեանը մէջ ընկղմեցան:

— Աղէկ, ըստ Շիքօ, Փարփփ կերթայ. ուրիմն ես ալ հոնն
կը դառնամ:

Եւ ինքն ալ իր ձին հեծնալով՝ անոնց ետեւէն զնաց ա-
ռանց իրենց մնխրագոյն վերարկուները վայրիկեան մը աչքին
առնեւէն կորսնցըներու, կամ եթէ խոհեմութեամբ կորսնցը-
նելու ալ ըլլար, առանց իրենց ձիերուն քայլերը լսելէ դադ-
րերու:

Քոլոր այս հեծեալներն Ֆրօմանիթօի ճամբան թողուցին և
ուղեւորեցան դէպի Շուալի. վերջը Շառանիթօն կամուընով
Սէյն գետէն անցնելով՝ Սէյնթ-Անթուէն փողոցը մոսան մե-
ղոններու պարի պէս երթալ Կիզի պանդոկը աներեւութա-
նալու համար, որ կերեւէր թէ միայն ասոնց դալուն կսպասէր
վրաներուն գոցուելու համար:

— Լաւ, ըստ Շիքօ, Քաթր-Ֆիս փողոցին անկիւնը դա-
րսնի մոնելով, Պ. Մայէնէն զատ Պ. Կիզն ալ հօն է: Մին-
չև հիմա եղածն հետարքրական էր. հիմա շահաւոր պիտի
ըլլայ: Սպասենք ուրիմն:

Եւ Շիքօ արդարեւ բառական տտեն սպասեց, թէն անօ-
թութիւնն ու ցուրոն ալ իրենց սուր ականերովը կալսէին
զանի խածնել: Վերջապէս գուռը բացուեցաւ. բայց վե-
րարկուներով պլլուած եօթը ձիաւորներու անգ՝ ինկուզնե-
րով պլլուած եօթը Գենովետիեան կրօնաւորներ երեւան ելան
խիստ մեծ համբիչներ շարժելով.

— Ահ, ըստ Շիքօ, ինչ անակնկալ վախճան. Իզի պան-
դոկն այդչափ սո՞ւրը աեղ է որ խոսվայուցներն միայն անոր
սեմին մօտենալով Աստուծոյ զատները կը դառնամ: Ասօք
տակը ստեղի շահաւոր բան մը ըլլարու է:

Եւ Շիքօ հեծեալներուն ետեւէն գացածին պէս կրօնաւ-
ողներուն ալ ետեւէն դնաց, չտարակուսելով բնաւ որ այս
կնկուզներուն տակը եղող մարդիկն վերարկուներուն մէջ
պլուածներն չըլլան :

Կրօնաւորներն եկան Նօթր Տամի կամուրջով Աէյն գե-
տէն անցան, Միթէի միւս կողմն ելան, և Բըթի Բօն կա-
մուրջէն ալ անցնելով՝ Մօպէո հրապարակը դացին ու ելանք
Աէնթ-Փէնվիէվ փողոցը :

— Ոհ, ըստ Շիքօ, Նօպէ փողոցին տանը առջին դժմար-
կը հանելով, ուր առաւոտուն աղօթած էր, միթէ նորէն ֆօն-
թէնալլո կերթանք, գիպուածով: Եթէ անանկ է, կարճ ճամ-
քէն չեկայ: Բայց չէ, կը սիսալիմ, շատ հետուն չպիտի երթանք:

Սրգարև կրօնաւորներն Աէնթ-Փէնվիէվի վանքին դուանը
առջին կանկ առին և մտան գափիթը, ուր կը տեսնուէր յիշ-
եալներուն կարգէն ուրիշ կրօնաւոր մաք որ ներս մտնողներուն
ձեռքերը տմենախորին ուշադրութեամբ նայելու դրազած էր:

— Զար սատանայ, ըստ Շիքօ, կերեւայ որ վանքը ըն-
գունուելու համար մաքուր ձեռք ունենալ պէտք է: Ստու-
գիւ արտաքրյ կարգի բան մը կայ հոգ:

Այս ըսերով, Շիքօ այս անձերն աշքին առջեւէն չփորաըն-
ցընելու համար ի՞նչ ընելիքին վրայ բաւական շփոթած, չորս
կողմը նայեցաւ, և զարմացմամբ տեսաւ. որ վանքին բալորտի-
քը եղող բալոր փողոցներէն կնկուզներ կերմէ էն, ոմնէք մի-
նակ, ոմնէք ալ զայդ զոյդ քալելով, բայց բոլորն ալ դէպի վանք
կը շոկուէին:

— Ոհ, ըստ Շիքօ, որքն այս իրիկուն վանքը համա-
գումար ժողովմը կայ, որ Գաղղիոյ բոլոր Գենովակիւանք
կոչուած էն: Ահա, ծշմարտապէս կը խոստովանիմ որ այս ա-
ռաջին անգամ սաստիկ փափաք մը կուգայ ինձ համագումար
ժողովը ը ներկայ գտնուելու:

Եւ, կրօնաւորներն դասիթը կը մտնէին, ձեռքերնին կամ
անոնցմավ բռնած մէկ նշաննին կը ցուցընէին:

— Ես ալ հետեւնին կրօնամ մտնել ըստ Շիքօ, բայց երկ ու-

կարեւոր բաներ չկան վրաս, նախ՝ իրենց վրայ եղած կրօ-
նական զգեստն չունիմ, և մէջերնին ալ աշխարհական եղայրը
չկայ, երկրորդ՝ դռնապան եղածը ցուցընած բաներնին, քան-
զի սոուզիւ բան մը կը ցուցընէին: Ահ, եղայր Կոռէնվլօ,
եղայր Կոռէնվլօ, մէյ մը քեզ հոգ գտնէի, յարդ ելի բարեկ կտմա:

Շիքօ այս բայցագանցութիւնը Վենովակիւան կարգէն աւելի
պատկառելի կրօնաւորներէն մէկը միտքը բերելով արձակեց, որ
Շիքօի սովորական սեղանակիցն էր. եղա դիպուածով Լուվա-
կերակուր չէր ուտեր, և որուն հետ ապաշխարողաց հսնդի-
մին օրը մեր Կարօնն Վճմառթուի Կապիւեանն: Երթալով՝
ջրային թաշուն մը կերած և համեմեալ դինի խմած էր:

Եւ կրօնաւորներն հետզհետէ կուգային, անակ որ կար-
ծես թէ Փարփող ժողովուրդին կէսը կնկուզ առած էր, և
դռնապան եղայրն ալ առանց ձանձրանալու, զամենքն ալ
հաւասարապէս կը քննէիր:

— Տեսնենք, տեսնեք, ըստ Շիքօ ինքնիրէն: սոուզիւ-
այս իրիկուն արտաքոյ կարգի բան մը կայ: Մինչեւ վախճանը
հետաքրքիր ըլլանք: Ժամը եօթնուկէն է, ողորմութեանէ
հաւաքումը լմնաւ: Եղայր Կոռէնվլօն կրնամ Լա Քօնն-
ու Ապօնսուանա գ տնել, քանի ընթրելու ատենն է:

Շիքօ թողուց կրօնաւորներն երբ անոնք վանքին բոլորովէ-
քը կը ցրուէին և վերջը մեծ գոնէն ներս կը մտնէին, և ինքը
ձին վաղցընելով՝ Աէն-Փագ մեծ փողոցը դնաց, ուր Աէն-
Պէնուա մենաստանին դէմք Լա Քօնն ու Ապօնսուանի պան-
դոկը կար, հակառակամէր աշակերտաներով ու կրօնաւորնե-
րով ծաղկեալ ու բարդ պւածեալ:

Շիքօ յիշեալ պանդոկը ճանչուած էր, չէ թէ սովորական
հիւրիմը պէս, այս իրը այն խորհրդաւոր հիւրերէն մէկը ու-
րոնք երբեմն երբեմն կուգային ուկի սկսում մը և իրենց բանա-
կանութեան մէկ մասը Ու Քօնօծէի տունը ձգ ելու: Այս-

* Եական կան կը կոչուէր ժականակ մը այն տեղը ուր ժողովա-
կաններն կը գումարուէին Քրիստուի գովացընելու համար: Ճ. թ.

պէս կը կոչուէր Պեմետղի և Քաղոսի պարզեւներն մատակա-
րարող անձը վրա իր տանը նշանակ եղող դիցական հռչա-
կաւոր եղինքն անդադար կը թափէր :

Գ Լ Ո Ւ Ե . Յ Ա Խ Ա Կ Ա Խ Ա Խ Ա Խ

Ե Ր Ա Տ Բ Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ
Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ
Ե Ր Ա Տ Բ Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ
Ե Ր Ա Տ Բ Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Գեղեցիկ օրուան գեղեցիկ ալ իրիկուն մը յաջորդած էր .
միայն ցորեկը ցուրտ ըլլալուն համար գիշերն ալ տեկի ցուրտ
կար . ուշ մասյող գիշացւոյ գլխարկին ներքեւ իրենց լապ
տերին լսւոքը կարմրցած չոգին խօսանալը կը տեմնուէր .
կը լսուէր որոշակի սառուցեալ գետնին վրայէն անցնողնե-
րուն քալլերը , և օդին ցրտութեան պատճառաւ մղուած ու
առաճքական մակերեւոյթներով նհանջուած հրմ , հրմ , ձայնն
ինչոքս կըսէր մեր ժամանակի բնադէտ մը : Միով բանիւ ,
գարնանային այն գեղեցիկ սառոյցներէն մէկը կը տիրէր , ո-
րոնք պանդ ոկի մը ապակիներուն գեղեցիկ գոյնին վրայ կըր-
կին գեղեցկութիւն մը կաւելցընեն :

Եկրօ նախ սրահը մուաւ , և ամեն կողմերն ու անկիւննե-
րը աղէկ մը նայելէն ետքը՝ իր վնտուած անձը Պ . Քլօտի
հիւրերուն մէջ շկրմալով գտնել , ընտաներար խոհարանը իշաւ :

Պանդոկին տէրը հոն բարեպաշտ ընթերցանութեան մը
զբաղած էր , և ընդարձակ վառարանիմը վրայ դ տնուած
հնեղեղանման իւզի մը ըստ բաւականին տաքնալուն կսպասէր
որպէս զի արդէն ափերով պատրաստուած խել մը ձուկեն
տապակէ :

Եկրօի ներս մոտած ատենն համած ձայնէն Պ . Պօնօմէ զը-
լուխը վերուց :

— Ահ , դուք էք , ազնուականս , ըստ գիրքը գոցելով ,
Բարի իրիկուն և բարի ափորժակ :

— Ենորհակալ եմ կը իին բարեմաղթութեանդ համար , թէ
և վերջնը աւելի ձեր շահուն համար է քան թէ իմ : Բայց
ասի պիտի բաժնուի :

— Ի՞նչպէս , պիտի բարինուի :

— Ա.յո՛ , գիտէք որ ես մինակ կերակուր չեմկընալ ուտել :

— Թէօր պէտք ըլլայ , Պարոն , ըստ Պօնօմէ իր դտակը
հանելով , ձեզի հետ կընթրեմ :

— Ենորհակալ եմ , սիրելի հիւրս , սիրով կընդունիմ ձեր
սեղանակցութիւնը , բայց ուրիշ մէկու մը պիտի նայիմ :

— Եղբայր Կօւէնֆլօն , կարելի է , հարցուց Պօնօմէ :

— Ա.յո՛ , պատասխանեց Եկրօ՝ ընթրելու սկսաւ :

— Դեռ ոչ , բայց սակայն չուտ ըրէք :

— Ենուտ ընեմ :

— Ա.յո՛ , հինգ վայրկեանէն կը լմննայ :

— Եղբայր Կօւէնֆլօ դեռ ընթրելու սկսած չէ , դուք կը-
մէք թէ հինգ վայրկեանէն կը լմննայ :

Եւ Եկրօ գլուխը շարժեց , որն որ բոլոր աշխարհիս մէջ
հնաւատալու նշան մէ :

— Պարոն , ըստ Քլօտ , այսօր շորեքշարթի է և մեծ պահք
ալ մուանք :

— Լաւ , ըստ Եկրօ անանկ դէմքով մը որ Կօւէնֆլօի կրօ-
նական հակամասւթեանցը վրայ քիչ ապահովութիւն կը ցուցընէր , վերջը :

— Ա. ինչ հրաշք , կրկնեց Քլօտ այնպիսի շարժումնվ մը
որով ըստէ կուզէք յայտնապէս . թէ և միտքերնիդ կը հասկը-
նամ , բայց այնպէս է :

— Ստուգիւ , ըստ Եկրօ , խառնիխուռան բան մը կոյ այս
տեղ՝ հինգ վայրկեան Կօւէնֆլօ ընթրելին համար : Ա.յոր
հրաշքի բաներ կը տեսնէմ :

Եւ ճամբորդի մը իր չճանշած երկիրը կրխած ըլլալու կերպարանքով՝ Շիքօ սկսաւ գէպի առանձին խուց մը երթալ, որուն ներմակ և վարդաղոյն տողակիներով զարդարուած ու ասուեղէն վարդաղոյրով մը գոյուած գուռը հրելով՝ խիստ ներսը ճիսալի պատրուգաւոր ճրագի մը լոյսով տեսաս. յարգելի կրօնաւորն որ անհոգութեամբ իր ափոէին վրայ խաշած կտոր մը շոմին (սպաննագ) կը գարճընէր, և այս բանջարեցէն կերպալլոյն մէջ քիչ մը Ախւանի պանիր դնելով համեմել կը ջանար:

Մինչդեռ յարգելի եղբայրն այս խառնուրդը այնշափ ախորժելի չգտնելուն՝ երեսը խեղաթիւրելով զբաղած է զայն ընկերու, մենք մեր ընթերցողաց նկարագրենք զանի այնպիսի կերպարանքով մը որ ալոչափ երկար ատենէն վերջ անոր հետ ծանօթանալնուն համար բնառ պակասութիւն Բ՛՛ ուռած չպիտի համարեն մեզ:

Եղբայր Կոռէնֆլօ երեսունեւթ տարեկան կար և չինդ ոտք բարձրութիւն ունէր: Այս հասակը, կարելի է քիչ մը պղտիկ, եղբօրը ըսածին նայելով համեմատութեանց զարմացի ներդաշնակութեամբը ստացուած էր. վասն զի, ով որ բարձրութենէն կը կորանցընէ, լայնութենէն կը շահի, եթէ մէկ ուսէն միւսը երեք ոտք տրամադիծ հաշուենք, դիտէ աւան մարդ, որ շրջապատը ինը ոտքի կը հասնի:

Իր Հերակլեան թիակի ուկորներուն կերդունը՝ թիւսաւափ նման խոշոր և պարաններու նման գուրս ինկած մկանունեւրով գծուած լայն վիլմը ունէր: Դժբաղդարար վիկն ալ մարմնոյն համեմատ էր, այսինքն խոշոր ու կարճ: ուստի և եղբայր Կոռէնֆլօ զդացած առաջին քիչ մը սաստիկ յուղ մունքներուն՝ կաթուածը վրայ հասած կերեւէր: Բայց եղբայր Կոռէնֆլօ իր պակասաւորութիւնն ու սնկէ յառաջ գալիք վոսանդը աղէկ գիտնալով՝ բնաւ հոգ չէր ընէր. պէտք է ըսկնք նաև որ Շիքօ իր խուցը մտած ատենն ցուցըցած յայտնի վարանումն խիստ քիչ անդամ կը տեսնուէր վրան:

Եյ, բարեկամ, ի՞նչ կընէք հոգ, պառաց Կապօն փո-

փոխակի խոռոն զեններն, ճրագը և մինչև ըերանը՝ քանի մը կաթիլ դինով ներկուած ջուրով լեցուն ըմպանուկն դիտելով՝

— Զէք տեսներ. եղբայր, կընթթեմ, պատասխանեց Կօռէնֆլօ իր վանքին զանդակին նման զօրաւոր ձայն մը համելով՝

— Ասոր ընթթիք կըսէք, Կոռէնֆլօ: Խոտէն ու պանիրէն զատ բան մը չկայ, ըստ Շիքօ:

— Այսօր մեծ պահոց առաջին չորեքշաբթիւն է. փրկութիւնիս հոգ անք, եղբայր, փրկութիւնիս, պատասխանեց Կօռէնֆլօ ունդունքէն խօսելով ու աշքերը գէպի երկինք վերցնելով:

Շիքօ ապշեցաւ մնաց, նայուածքէն կիմացուէր որ հաղար անդամ տեսած էր այս մեծ պահոց մէջ Կօռէնֆլօի ուրիշ կերպով ընթթելը:

— Փրկութիւննիս, ըստ Շիքօ. ջուրն ու խոտերը մեր փրկութեանը հետ ի՞նչ բան ունին:

— Միս մի ուտերի յուրբաթի,

Ոչ ալ բնաւ չորեքշաբթի.

ըստ Կօռէնֆլօ:

— Բայց ե՞րբ ճաշեցիք:

— Եթու չճաշեցի եղբայր, ըստ կրօնաւորը աւելի ուղնակէն խօսելով:

— Ահ, ըստ Շիքօ, միայն ունդ ախօսութիւն պէտք է աշխարհա ըսորդ Ֆենավակեանց հետ հաղորդակցելու համար: Ուրեմն թէ որ չճաշեցիք, ըստ Շիքօ յիշափ չափաւոր կերպով մը ունդ ախօսելով, ի՞նչ ըրէք, եղբայր:

— Առա մը շարադրեցի, ըստ Կօռէնֆլօ դլուխը գուռով զութնամբ վերցընելով:

— Բէհ, ճա՞ռ մը, ի՞նչ պիտի ընէք:

— Այս իրիկուն վանքը պիտի խօսիմ:

— Ծիծաղելիքան, ըստ Շիքօ, իրիկունը ճա՞ռ պիտիխօսիք:

— Այս, ըստ Կօռէնֆլօ պանդախառն շոմինին առաջին պատառը բերանը գնելով, և երթալ ալ մօտ է. ունկնդը ըներն անհոգիներ զիս կսպասեն:

Նիքօ միտքը բերաւ վանքը գացալ խելմը կրօնսուորներն և յիշելով որ Պ. ող Մայէն հաւանականարար տնոնց մէջն էր, հարցուց ինքնիրեն թէ ի՞նչպէս կուէնֆլօ, որուն մինչև այս օրը առենարամութեան կարիւեար հանկ ամմանքներէ զուրկ ըլլալն գիտէր, այս իրիւունը իր մեծաւորէն ֆողէֆ ֆուլընէ, որ Անթ ժէնվիւլի վանահայրն էր, ընտրուած էր Լորէնցի իշխանին և բարձրամթիւ ժողովոյ մ'առջին քարողելու :

— Բէհ, ըստ Նիքօ, ժամը քանիին պիտի քարողէք :

— Իննէն մինչեւ ինուուկէս, եղբայր :

— Լաւ, հիմա իննին քառորդ կայ. գոնէ մէկ վայրկեան մ'ալ կեցիք, գիտէք որ ութ օրէն աւելի է միասեղ ճաշելու առիթ գտած չենք :

— Ս.մի մեր պակասութիւնը չէ, ըստ Կոռէնֆլօ, և կազաշեմ, ամենասիրելի եղբայր, որ հաւատաք թէ մեր քարեկամութեանը բնաւ վնաս մը չընմի, գուք ի պաշտօնէ պարտաւորած էք Հէնրի Պ. մեծ թագաւորին քովը մնալ. իմ պարտաւորութիւնս ալ ողորմութիւն հաւաքել և վերջն ալ ազօթք ընել է. ուստի մեր քամնուած զ անուին զարմանալի բան չէ :

— Ա.յո՛, ըստ Նիքօ, բայց ինծի կիրեւի որ երբ մէկզմէկ տեսնենք, ուրախանալու նոր իրաւունք մ'ունինք :

— Սրդարեւ յանհունու ուրախ եմ, ըստ Կոռէնֆլօ ամենախեղուկ դէմքովմը, բայց այժմ ստիպուած եմ ճեղփի ճգելու :

Ա.յո ըստելով ոորի վրայ ենելու շարժում մ'ըրաւ :

— Գոնէ խոսեղէններնիդ կիրէք, ըստ Նիքօ ճեռքը ուսմին վրայ դնելով և զայն նստեցրնելով,

Կոռէնֆլօ շոմիններուն նայելով հաւաշանք մը մղեց :

Վերջը աշքը կալմրցուծ ջուրին վրայ տանելով գլուխը դարձուց :

Նիքօ տեսաւ որ որալու վայրկեանն հաստու :

— Կը յիշէք, ըստ, Մօնմառթուի կապելիոնն ըրած պըզտիկ ճաշերնիս, որուն վրայ հիմա ճեղփի կը խօսէի. դիտէք երբ մեր մեծ Հէնրի Պ. թագաւորին ինք դիմունը ու ուրիշները

կը ձագկէր, Կոռանթ-Պաթըլիէսի ջրային թռչուն մը կերաննը խաչափափ քամած ովլմը, և Պուռկօնէի գեղեցիկ զինի խըմեցինք. այն զինիին ի՞նչ անուն տուիկ գուրք, անի ձեր զտած զինին չէր :

— Իմ զ աւառիս, Ոօմանէի զինին է, ըստ Կոռէնֆլօ :

— Ա.յո, այո, կը յիշեմ, ծնած առեննիդ անէր ձեր ծծած կաթըլ, Կոյեան արժանի զաւակ :

Կոռէնֆլօ մելամաղծոտ ժպիտովմը լեզուն շրթուհըներուն վրայէն անցուց :

— Ա.դ զինիին համար ի՞նչ կրսէք, ըստ Նիքօ :

— Ա.դէկ էր, ըստ կրօնաւորը, բայց անկէ աղէկին ալ կըրնայ ըլլալ :

— Անցեալ իրիկուն մեր պանդ սկապետն Պ. Փլու Պօնօմէ ալ տնանուկ կրսէր, և կը պնդէր թէ իր ներքնատանը մէջ յիսուն շիշ զինի կայ որուն քով Մօնմառթուի կապելիոնի գինին անպիտան բան մ'է :

— Սոոյդ է, ըստ Կոռէնֆլօ :

— Ի՞նչպէս, սոսոյդ է, պոռաց Նիքօ. ուրեմն ինչո՞ւ այս գարշէլի կարմրացեալ ջուրը կը խմեք, քոնի որ թեւելնիդ միայն երկնցընելով կրնաք զայն խըմել. բէհ :

Եւ Նիքօ ըմպանակն առնելով մէջի ջուրը սենեակէն դուրս թափեց :

— Ամեն բանին ժամանակը կայ, եղբայր, ըստ Կոռէնֆլօ : Երբ մարդս գործ մը չունենայ, զինին խմելու և ետք, ալ զլասուած փառաւորելու է, որ զայն սոելդեց . Բայց երբ ճառ մը կայ խօսուելու, ջուրի գործածութիւնն նախապատիւէ, թէն գինիի համ չըւնի :

— Էն. հակառակը զինի գործածելու է, և փորձն ալ այս է որ ես ալ ճառ մը ունիմ խօսելիք և գեղադրիս մէջ ալ արդէն վկայութիւնն ունիմ. այդ Ոօմանէի զինիին շիշ մը բերել պիտի ամամ. բայց հետք ի՞նչ ուտելու է, սիրելի Լորէնֆլօ:

— Ա.յո խոսերէն մի ուտէք, ըստ կրօնաւորը, քանիդ շատ չէշ են :

Այս այս ըստ Նիքօ, Կոռէնֆլօի ավտոէն քթին տանելով
կը հօտին :

Եւ այս անդամ, պլատիկ պատուհան մը բանալով ախտէն
խոռերովը փաղոցը նետեց :

Վերջը ետին դառնալով՝

— Պարոն Քլոտ պոռաց :

Պանդոկապետը, որ հաւանականաբար դրանը դուրս
կայնած մտիկ կը նէր, ունին վրայ երեւացաւ :

— Պարոն Քլոտ, ըստ Նիքօ, սա անցեաները ձեր գոված
լուագոյն Ռօմանէի գինին երկու շիշ բերեք ինձի :

— Երկու շիշ, ըստ Կոռէնֆլօ, ի՞նչ պիտի ընէր, ես չեմ
խմեր :

— Թէ որ գուք ալ խմէիք, չորս շիշ, վեց շիշ տանը մէջ ե-
զած բոլոր գինին հսու բերել կուտայի, ըստ Նիքօ : Բայց ո-
րովշետև մինակ պիտի խմեմ, երկու շիշ բաւական են :

— Յիբափի, ըստ Կոռէնֆլօ, երկու շիշը բաւական է, և
թէ որ ասոք հետ միայն պահոց կերակուր ուտէք, խասուվա-
նահայրնիդ բան մը չըսեր ձեզ :

— Սառողիւ, ըստ Նիքօ. մեծ պահոց չորեքշաբթի ու-
տիքի կերակուր կուտուի :

Եւ Պ. Պօնօմէի գինի բերելու համար ներքնասունը գա-
ցած ժամանակը, Նիքօ դէպի կերակրոց շտեմարանը երթա-
լով պարարակ վառեակ մը դուրս հանեց :

— Ի՞նչ կը նէր հոդ, եղբայր, ըստ Կոռէնֆլօ որ ակամայ
կապօնի բոլոր շարժումները կը գիտէր, ի՞նչ կը նէր հոդ :

— Գետի ձուկ մը կայ հոս, կառնեմ որ ուրիշի ձեռք ըը
համենի : Մեծ պահոց չորեքշաբթի օրերը այս տեսակ կերա-
կուրներուն թշնամին շատ է :

— Գետի ձուկ մը. ըստ Կոռէնֆլօ ապշած :

— Անշեշտ, ըստ Նիքօ, ախորժաշարժ հաւը Կոռէնֆլօի
անշեշտ բերելով :

— Զուկը կոտոց կունենայ, ըստ կրօնաւորը :

— Կտուց, ըստ կապօն, կտոցը ուր է, ես կնճիթ մը կը
տեսնեմ :

— Թեւե՞ր, ըստ Գենովափեան :

— Անոնք լողացիք են :

— Փետուրնե՞ր :

— Խեցի են, պիտիկ Կոռէնֆլօս, գինով էք :

թէ շոմին կերայ ու ջուր խմեցի :

— Լաւ, չոմիներն ստամքամէդ բեռնաւորեցին, և ջուրն
ալ զըսւինիդ զարկաւ :

— Ես աւասիկ մէջ պահէովապետը, անի թող վճռէ :

— Ի՞նչ :

— Արդեօք ասի ձուկ է թէ վառեակ :

— Լաւ, բայց առաջ թող գինին բանայ, նայիմ ուզած
դինինիս է : Բայց, պարոն Քլոտ :

Պարոն Քլոտ մէկ հատը բայցաւ և կէս զաւաթ լեցուց
Նիքօին :

Նիքօ պարպեց զայն և լեզուն շաշեցուց :

Ոհ, ըստ Մեղուսի անհամութենէն բնաւ ճաշակ մը
շառի : ուստի շիմ կրնար ըսելթէ Մօնմարթոփ գինին աղէ՞կ
է թէ դէ : Ապահով ալ չեմոր ան այ ըլլայ :

Կոռէնֆլօի աշքեց Նիքօ զաւաթին մէշ մնայած քանի
մը կամիկ գինին տեսնելով կը շոշողովէին :

— Առէք, եղբայր, ըստ Նիքօ, մատուցի մը չափ գինի
լեցընելով կրնաւորին զաւաթին մէշ, դուք այս գինին զա-
ւաէն էք, շիտակը բուք ինձի :

Կոռէնֆլօ զաւաթը տանելով շրմունքներուն տարաւ և
կամայ կամայ մէշը եղած գինին ճաշակեց :

— Դիշտ այն գինին է, ըստ, բայց ...

— Բայց, ըստ Նիքօ :

— Այց շատ քիչ ըլլալուն չեմ կրնար աղէկ կամ գէշ ըլ-
լան ըսել :

— Ես ալ գիտեմ անանկ ըլլալը, ըստ Նիքօ, բայց ի՞նչ
ոչուու, եթէ խօսելու ճառ մը չունենալիք, պիտի պայմէի
ձեզ որ անդամ մ'ալ ճաշակէիք աս գինին :

— Հոդ չէ, ձեզի հաւնեցընելու համար պիտի խմեմ, ըստ կրօնաւորը:

— Անտարակոյս, ըստ Շիքօ:

Եւ Կոռէնֆլո դաւաթը կէս մը լեցուց՝
Կոռէնֆլո առաջինին նման զայն ալ բերանը տանելով մի
և նոյն խիղճով ճաշակեց:

— Շատ լսու, ըստ, շտո լսու, հաւատացէք:

— Բէհ, ըստ Շիքօ. պանդոկապետին կուսակցութիւն
կընէք:

— Ազէկ արգեցող մը, ըստ Կոռէնֆլո, նախ դինին գա-
ւառը կը համայ, յետոյ պապիսութիւնը, վերջն ալ տարիքը:

— Ոհ, տարիքը, ըստ Շիքօ, շտո կուզեմ հասկընալայս
դինին տարիքը:

— Շատ դիւրին է, կրկնեց Կոռէնֆլո իր դաւաթը եր-
կնցընելով. քանի մը կաթիլ ալ լեցուցէք, հիմա կըսեմ ձեզի:

— Շիքօ կրօնաւորին դաւաթը երեք քառորդ մասամբ լր-
ցուց, որն որ կամաց կամաց պարպելով և առանց փոխուելու,

— 1561 ինն է, ըստ գաւաթը գետինը դնելով:

— Ճիշտ 1561 ին, պոռաց Քօսոմէ:

— Եղբայր Կոռէնֆլո, ըստ Կապօն գլուխը բանալով,
Հոռոմի մէջ կըսեն թէ ձեղմէ առէլ դինի համացող չկայ:

— Ես սովորութիւն ունիմ քիչ մը խմելու, ըստ Կոռէնֆլո
համեստութեամբ:

— Մինակ սովորութիւն չըլլար, քիչ մ'ալ յօժարութիւն
որէոք էս քանդի փորձն իմ վրաս է: Բայց ի՞նչ կընէք, կել-
նէք:

— Ա.յո՛:

— Ի՞նչ պիտի ընէք:

— Փողովքիս պիտի երթամ:

— Առանց իմ ձուկէս քիչ մը ուտելո՞ւ:

— Ոհ, ըստ Կոռէնֆլո, ճշմարտապէս, յարգելի Եղբայր,
ըմպելիքէ ճանշածնուղ չափ ուտելիքէ ալ կը ճանչէք: Պա-
րոն Քօսոմէ, սա կենդանին ինչ է:

Եւ Եղբայր Կոռէնֆլո ցուցուց վիճաբանութեան նիւթը:
Պանդոկապետը զարմացմամբ այս հարցումն իրեն ընու-
ղին նայեցաւ:

— Ա.յո՛, ըստ Շիքօ, կը հարցուի ձեզի թէ ի՞նչ է այս
կենդանին:

— Ճշմարտապէս, ըստ պանդոկապետը, վառեալ մ'է:

— Վառե՞ալ, ըստ Շիքօ ահարեկ գէմքով մը:

— Ա.յո՛, և Մանսի վառեալ, շարունակեց պարոն Քօսո:

— Լսու, ըստ Շիքօ, կերեւի որ սխալեր եմ. բայց որով-
հետեւ միտքս դրած եմ այս վառեալին ուտելու, մեղապարտ
չգտնուելու համար, կազաքեմ, եղբայրս, որ յանուն մերս փո-
փոխակի զգացմանց վրան քանի մը կաթիլ ջուր սրսկելով մը
կրտէք ու ձուկ ընէք:

— Բէհ, ըստ Կոռէնֆլօ:

— Ա.յո՛. գարձեալ կազաքեմ, Եղբայր, գուցէ առանց
անոր մահացու մեղք պատճառող կենդանի մը կերած ըլլամ:

— Ա.յէկ, ըստ Կոռէնֆլօ որ բնութեամբ ընտիր ընկեր
մը ըլլալով երեք անդամ ըրած ճաշակառութեան սիրոյն
համար յօժարութիւն ցուցուց, բայց ջուր չկայ:

— Զեմ գիտեր ուր, ըստ Շիքօ, այսինք գրուած է. Զեռ-
քիդ տաճք դառած առ հարկի գործած է: Դիմանարութիւնը
ամեն բան կընէ, գինիով մկրտեցէք, եղբայրս, գինիով մը-
կրտեցէք. կենդանին թէեւ ուղածնուս պէս ուղղափառ ըլ-
լար, բայց առջինին նման աւելի գէշ ալ չմնար:

Եւ Շիքօ կրօնաւորին դաւաթը մինչեւ բերանը լեցուց
որով մէկ շնչը պարպանեցաւ:

— Յանուն Բակ ոսի, Մոմասի և Քամսասի, Եղբայրութեան
մեծի սրբոյ Յանդակիրւելայ, ըստ, Կոռէնֆլօ, մկրտեմ ըզ-
քեղ ձուկն:

Եւ մասները գինին մէջ թաթիւելով քանի մը կաթիլ որբա-
կեց կենդանին վրայ:

— Հիմայ, ըստ Կապօն իր դաւաթը կրօնաւորին դաւա-
թին զարնելով, խմենք նոր մկրտելոյն կենացը: երանի թէ

շուտով եփեր, և զայն կատարելադորձեցու համար պարոն Փառականի ՚ի գործ դնելիք վարպետութիւնը իր բնական հանդամանքներն կրկնապատկեր :

— Այս՝ իր կենացը, ըստ Կօռէնֆօ իր մեծամայն ծիծաղը ընդմիշելով, Ենիքի տուած զինին խմեռու համար, իր կենացը, ո՞հ, ո՞չափ խիստ զինի է :

— Պարոն Քօռո, ըստ Ենիքօ, շատով այս ձու՞ը շամփուրն անցուցէք, իւզուեցէք թարմ կարագով, որուն մշշ քիչ մը ճարպ ու մանր սոխ ըլլայ. և երրոր խորովուելու սկսի, երկու կտոր հաց տապակեցէք ու տաք հասքերէք :

Կօռէնֆօ բան մը չիր խօսէր, բայց չչ ու ու գլխան տեսակ մը պլատի շարժումէն կիմացուեր որ կատարելապէս Շիքօի պէտի յարմարի :

— Հիմայ, ըստ Ենիքօ իր միտրը կատարուած ու եմնելով, պարոն Պօնոմէ, Սարտին և Թօն ձա կիրէն ալ կուզինը : Ա եծ պահոց մէջ ըլլախնուս, ինչպէս լուս հիմայ բաշեսպաստ եղբայր Կօռէնֆօ, բոլորովին ցը ճաշ մը պիտի ընեմ. Ա ելլը նաև նայեցէք, այս Պօնոմէի օճ. ի ընտիր զինիէն երկու շիշ ալ բերէք :

Խոհանոցի անուշ հոտերը, որ ճշմարիտ որերամներուն շատ սիրելի եղող. հարաւայն խոհանուցը կը յիշելընչը, կը ու երօնին երեւան ելնել և մանզ այսպար մինչեւ կրօնաւորին ուղեցը կը բարձրանային : Ենդուն ս' խոհա իլ, ա.ք' ըը փայտեղան, բայց գարձեալ ինք վինը բանեց ու առքի վրայ ենելու շարժում մը ըրաւ :

Պ . Տը Մոնարո իշխանին անհանդասութիւնն իմանալով ամենազդու ժպիտով մը ու նայուածքով մը զինքը առահութեաց :

— Հիմա , երբ մէկ ավնուական մը Աստուծոյ պարտաւոր եղածն խորհի , ըսաւ տ' Անժու դուքսն ակամայ ճայնը իջեցնելով , ան ատեն կը խորհի իր . . .

— Իր թագաւորին վրայ , յայսնի բան է , ըսաւ Շիքօ :

— Իր դաւառին վրայ , ըսաւ դուքս տ' Անժու , և միշտ իմանալ կուզէ որ իր դաւառը սոտուգիւ իրեն բաժինն ինկած բուլը պատիւն ու բոլոր բարօրութիւնը կը վայելէ . վասն զի բարը ավնուական մը նախ իր շահերը Աստուծունի ետոքըն ալ Անոր զաւակն եղող դաւառականներէն :

Փողովը ուժգին ծափահարեց :

— Լաւ , ըսաւ Շիքօ , բայց թագաւոր՝ անոր վրայ ընաւ խօսք մը չկայ , այն ինեղն ինքնակալին վրայ , Ես կը կարծէի

ինչպէս որ Ժիւվիլիի կաթողին վրայ ալ գրուած է, որ միշտ
կըսէն. Ասպառած, թափառոր և տիկնայք :

— Կը հարցընեմ ուրեմն, շարունակեց դուքս ա՛Յնժու,
որուն դուքս ինկած այսուըը կախէնք քիչ քիչ տենդական
կարմրութիւն մը ստանալ, կը հարցընեմ ուրեմն թէ իսկաղզ
դիա կոչուած քաղցր ու գեղեցիկ հայրենիքս խաղաղութիւն
ու երջանկութիւն կը վայելէ, ցաւոք սրտի կը աեմնեմ թէ
ոչ :

Յիշափի, եղբարք իմ, Տերութիւնը զանազան կամքերով
ու ճաշակներով ներդուած կը դանուի, որոնք բոլորն ալ իրար-
մէ զօրաւոր են. գոհութիւն գերազանց կամքի մը տեկարու-
թեանը, որն որ մունազով թէ ինքը բոլորովին իր հպատա-
կացը բարեայն համար պիտի տիրէ, այս արքայական սկզբուն-
քըն միայն ինքնահաճոյ միջոցներով կը յիշէ, մանաւանդ թէ
այսպիսի հակառակ կերպով որ իր աղդովական գործերն
միայն չար գործելու համար կը կատարուին, Այս գ-ժբաղ-
դութիւնը անշուշո Պազզիոյ մահառիթ ճակատակրին կամ
իր գլխաւորին կուրութեանը տալու ենք: Բայց թէ և չիտ-
նանք անոր ճշմարիտ աղբիւրն, կամ միայն կասկած մ'ըլլայ
ըստանիս, թշուառութիւնն ընաւ իրական չէ. և ես ալ կամ
նազզիոյ ընդգէմ կընկի գործած յանձնակներն կամաս-
տանեմ, կամթաղաւորին քանի մը ուսւ բարեկամներէն քան
թէ նայն խալ թագաւորէն գործուած տաքարշութիւններն :
Սհա այս է պատճառն, Պարոնայք, որ երկու պարագային
մէջ պարաւորեցայ, իբր խորանի և դահի սպասուոր զիս
միացընել այսակնեանց որոնք ամեն առիթներու մէջ չերե-
տիկուութեան անջառումը և անզգամ խորհրդականներու ա-
նուումը կը խնդրին:

Ահասափի, պարոնայք, ինչ որ պիտի ընեմ միաթեան
համար զիս ձեզի հետ միացնելով:

— Ոհ, ոհ, ըստ Եփօ խօստ զարմացկատ աշքերով. ահա-
ւասիկ ականջի ծոյր մը որ կանցնի. և ինչպէս որ առաջ կար-
ծած էի; իշու ականջ մը չէ այս, այլ աղուեսի:

Տ Անժու դուքսի այս յառաջաբանը, որ կարեկի է մեր ըն-
թերցողաց քիչ մը երկար կերեւի, որովհետեւ այն թուակա-
նի քաղաքականութիւնէն երեք դար հեռացած են. ներկայ
եղողները այնչափ դրաւեց որ շատերն իշխաննին մատեցած էին
անոր խօսած կառէն վանկ մը չը կորմնցնեն որուն ձայնը ևո-
քան վես կը նմանէր, քանի որ խօսքերուն խմասն ալ աւելի
յատակ կըլլար:

Ան ատեն տեսարանը հետաքրիեր էր: Ենթիայ եղողներն՝
որոնք քամնըհինդ. կամ երեսուն հոդի կային, կնկուղնին ե-
տեւնին, որով իրենց ազնիւ, համարձակ, արթուն և հետա-
քրպարկան գէմքերն կը տեմսուէին, տեսարանը լուսաւորող
միակ կամդեղնին լուսոյն տակ կը դումարուէին:

Մեծամեծ ստուերներ չէնքին միւս կողմերն կը տարած-
ուէին, որոնք մի և նոյն տեղը կատարուած արամախօսու-
թեան օտարներ կը համարուէին:

Խումբին մէջ ո՛ Անժու դուքսին գեղնած գէմքը կերեւէր,
որուն ճակատու ուկորները խոր աշքերուն մէջ կընկզմէին,
և որուն բերանը բացուած ատեն մեռելի գլխոյ մը ախուր
տեսքը կը ներկայացընէր:

— Տէր իմ, ըստ դուքս տը Ափլ, Զեր Բարձրութեան ըո-
ւոր խօսածներուն չնորհակալսւթիւն յուցընելով կարծեմ կը
պարտաւորմ ծանուցանել որ չորս կողմերնիդ գ տնուողներն
չէ թէ միայն ձեր յուցըցած սկզբունքներուն այլ և Զեր
բարձրութեան խալ անձնուէր մարդիկ են, և ձեր վրայ տա-
րակոյս չմնալու համար ժողովը լմնալին ետեւ այս ըստս
ձեր խորհածէն աւելի աղդու կերպով պիտի գործադրեն:

Տ Անժու դուքսն խօսականացաւ. և ժողովը վրայ անհան-
դիստ նայուածք մ'արձակից :

— Ոհ, ոհ, ըստ Եփօ, կամ կը խարսխի, կամ մինչև
հիմա տեսածներս յառաջարտութիւն մ'են, և արդէն խօս-
ուած և եղած մնուիներէն աւելի կարեւոր բան մը տեղի
պիտի ունենայ հիմա:

— Տէր իմ, ըստ կարդինալը որմէ իշխանին նայուածքն

խուսած, չերթէ որ Զեր Բարձրութիւնը դիպուածով վախ մք կզբայ, ձերքովը գտնուող մարդոց անուններն կը յուսամ որ ձեր կապահովեն, Ահաւասիկ Պ, տ' Օնի կառավարիչն, Պ. տ' Անդրակ երիտասարդն, Պ. տը Ռիփէրաք և Պ. տը Լիվա- քո, աղնուականներ զորս Զեր Բարձրութիւնը կարելի է կը ճանչայ և որշափի քաջ նոյնչափ ալ օրինաւոր են: Ահաւասիկ նաև Պ. տը Քասթիյլն կալուածոց իշխանն, Պ. տը Լիւզին- եան, Պ. Քորիս և Պ. Լեթէռ, որոնք ամենքն ալ Զեր ար- քայսկան Բարձրութեան իմաստութեանը վերահասու են և կրօնքի ու գահի աղասուութեամբ ձեր պաշտպանութեանց ներքե վարուելով Երջանիկ կը գտնուին: Ուրեմն երախոսա- գիտութեամբ ձեր մեզի տալ ուզած հրամաններն պիտի ըն- դունինք:

Տ' Անժու դուքսն չիրցաւ իր հպարտութեան շարժումն ծածկել, Այս անձինքը՝ որոնց գոռոզութիւնը մէկը չեր կը նար- նար զապել, հնազանդութիւն կը խոստանային:

Դուքս տը Մայէն շարունակեց:

— Դուք, Տեր իմ, ձեր ծննդեամբն ու գիտութեամբը սուրբ Միութեան ընական գլուխն էք, և պէտք ենք իմանալ ձեզմէ թէ ինչ ճամբայ բռնելու է թագաւորին սուռ բարե- կամններուն նկատմամբ որոնց վրայ հիմա կը խօսէնք:

Ստիկ պարզբան չիայ, պատասխանեց իշխանն տեսակ մը չեր նաևկան յուրմամբ որ տկար մարդոց քաջութեան տեղ կը բռնէ. երբ ուրիշ ծառերու վրայ աճով ու խոտաւոր տուն- կերն դաշտի մը մէջ կը բռնմին, որմէ առանց անոնց կրնայ առաւ հունձք մը քաղուիլ պէտք է այս վոանդաւոր տուն- կերն արմատափնիլ ընել, Յագաւորը չէ թէ բարեկամններ ունի իր քոփն, ոյլ պալատականներ, որոնք զինքը կը կորսնյընն և Գաղղիոյ ու քրիստոնէութեան մէջ շարունակական գայթակ- ցութիւն մը կը հզեն:

— Աշխարիս է, ըստ դուքս տը Կիո խօնարհ ձայնով մը:

— Վանաւանդ. այս պալատակամնները, կրկնեց կարդինալն, կարդինալն մեզ, որ Նորին Ահաւակառութեան ճշմարիտ բա-

բեկամներն ենք, մինչև իրքովը երթալէ, քանի որ ասի մեր պաշտօններուն ու մեր ծննդայը իրաւունքն է:

— Աստուծոյ ծառայելու պաշտօնն, ըստ յանկարծ գուքս տը Մայէն, առաջին Միութեան ուամիկ եղայրներուն թու- զունք: Ասոնք Աստուծոյ ծառայելով՝ պիտի ծառայեն անոնց որք Աստուծոյ վրայ կը խօսին իրենց: Խոկ մենք մեր զ որ- ծերը նայինք: Մարդիկ մեզ կը նեղեն, մեզ կը կտամբեն ու կը նախատեն ու մեր գլուխն եղող պատուելի իշխաննուս վա- յելու չ յարդանքը կը զլանան:

Տ Անժու դուքսին ճակատը կարմիրեցաւ:

— Կործանենք, կործանենք մինչև ցվախճան այդ անիծ- եալ սերունդը զոր թագաւորը մեր գոյից մասերովը կը հա- րբատացընէ, և ամեն մէկերնիս պարտաւորինք անոնցմէ միայն մէկ հոգի սպաննել: Հոգի ենք, անոնք ալ համ- բենք,

— Իմաստութեամբ խորհեցաք, ըստ դուքս տ' Անժու, և արդէն դուք ձեր գործն ըրիք, պարոն տը Մայէն:

— Այս ըրածս բան մը չէ, ըստ դուքսը:

— Բայց պէտք է մեզ ալ թողուլ, Տեր իմ, ըստ տ' Անդ- րակ ինծի Քելիւն յանձնեցէք:

— Ինծի ալ տը Մօժիրօնն, ըստ Լիվարո:

— Ինծի ալ տը Շօմպէրիկը, ըստ ՈՒփէրաք:

— Աղէկ, աղէկ, կրկնեց դուքսն, դեռ Պիւսի մալունինք քաջ Շիւսի մը, որ քանի մը հոգիի յանձնուելու է:

— Աս ալ մեզի, մեզի, պառացին բոլոր եղբայրներն:

Պ. տը Մոնտորօ յառաջացաւ:

— Ոհ, ոհ, ըստ Շիքս, որ իրերուն դարձուածքը տես- նելով ալ չեր ծիծաղէք, ահա որսորդապետն որ բաժին մ'ալ մնք ուզելու կուդայ:

Բայց Շիքօ կը սխալէք:

— Պարմանայք, ըստ ձէռքը երկնցընելսվ, վայրիկան մը լուսութիւն կը խնդրեմ: Մենք ծանուցեալ մարդիկ ենք և կը վախանք իրագու: Համարձակութեամբ բան խօսելու: Ահա

ուշիմ մարդիկ ենք և մնութի տարակուսանօք ժամանակ կանչ ցընենք :

— Պարոնայք, քիչ մը քաջութիւն, համարձակութիւն և աներիլիւզութիւն ունեցէք : Խօսքը Հէնդի թաղաւորին նազելիներուն վրայ չէ, և ոչ ալ մնոր քով երթալու համար զգացած դժուարութիւններուս վրայ :

— Խօսէ նայինք, ըստ Նիքօ աշքերը խոստովանաբանին մէջն տարածելով և ձախ ձեռքովին ալ լոողական ձագառ մը չի ներկով որ խօսուածներէն բան մը չկորսնցընէ : Խօսէ նայինք, փութա, կապասեմ:

— Հիմա մեզի գրադեցընողը, Տեարք իմ, շարունակեց իշխանը, այն անկարելիութիւնն է որուն առջին նեզն ինկած ենք. այն թագաւորութիւնն է զոր մեզ կուտան և Գաղղիացի աղնուականութեան մը համար ընդունելի չէ. ձանձրացուցիչ երկարաբանութիւններ, տիբապետութիւն, անկարողութիւն և շուայլութիւններ, զեղիսութիւն անանկ հանդէսներու համար, որոնք բոլոր Եւրոպան գթութենէ կը ծիծաղեցընեն, և պատերազմի ու արուեստից վերաբերեալ բաներու խնայումն : Այսպիսի վարմունք մը Պարոնայք, ոչ տղիսութենէ է, և ոչ տկարութենէ, այլ անմասութենէ :

Տխուր լուսթիւթիւնն մը որոսրդապետին խօսքելն ընդունեցաւ : Տպաւորութիւնը այնչափ խորին եղաւ, որ ամեն մարդ բարձրաձայն ըստելիքն ցած ձայնով կը սէր, ամենն որ ամենքն ալ իրենց յատուկ ձայնին տրճագանքէն սարսափելով՝ սկսան դողուլ խորհելով որ տմեն կերպով ատենաբանին համակարձիք էին :

Պ. աը Անասոր քաջ գիտնալով որ այս լուսթիւնը չափազանց հաւանութեան նշան էր, շարունակեց :

— Պէտք է որ ասպինք սասանկ յիմար, գանդաղ աւ վասթագաւորի մը ներքի, քանի որ Ապանիա վայսակոյսներ կը վառէ, Պէտմնիա վանքերաւն մժութեանը մէջ թմրած հին հերեւիկանները կարթնցընէ, Անդ զիս իր անողաքելի քաղաքի անութեամբը դադախարներին ու դլուխները կը կորէ :

Ամեն ազգեր վասաւորապէս մէյմէկ բանի կաշխատին : Մէկը կը քննանանք, Պարոնայք, ներեցէք ինձ մեծ իշխանի մը առջեւ այսպէս խօսելուս համար որ կարելի է իմ յանդկանութիւնն կը կշտամիէ, վաս զի ընտանեաց նախադասութիւն ունի, Պարոնայք, չորս տարիէ ի վեր է մեզ կառավարողը թագաւորն չէ, այլ կրօնաւոր մը :

Այս խօսերուն վրայ ճարտարարութեամբ պատրաստուած ու ժամէ մը ի վեր մեծաւորներուն զգուշութեամբը ճարտարութեամբ պահուած ճայթիւնն անանկ սաստիկ շոնչեցաւ որ նախորդ տեսարանի ցուրտ ու խմասուն վարմութենին հիմնակուան այսահարութիւններուն հետ բնաւ նմանութիւն չառաւ :

— Անպիտան Վալուայի տեղ, պոռացին, անպիտան Հէնրի եղբօր տեղ աղնուական իշխան մը ընտրենք մեզի, սասպետ թագաւորմը, բռնաւոր մը, թէ որ պէտք ըլլայ, բայց չէ թէ կնկուղաւոր մը,

— Պարոնայք, Պարոնայք, ըստ կեղծաւորաբար գուքս ու Անժու, ներեցէք, կարաքէմ, իմ եղրօս որ կը սմալի, կամ լաւ եւ սմալած է : Թողարկչք ինձ յուսու, պարոնայք, որ մեր իմաստուն խրաներն, որ միտութեան իշխանութեանը աղլու միջնորդութիւնը զանի ճամբու պիտի բերեն :

— Սուլէ, օձ . ըստ Նիքօ, սուլէ :

— Տէր իմ, պատասխանեց գուքս որ Ափ, Զեր Շարձրութիւնը կարելի է քիչ մը արաջ կամ վերջապէս իմացաւ ընկերութեան խորհրդայն անկեղծ արայայուսութիւնը : Ոչ, հոս ապաշներուն խրտուիլակին, այն է Պէտմնէի դէմ ժողով չիայ, ոչ ալ Եկեղեցւոյ պաշտպանութեանը հուսնը, քանզի անի ինքնինքը կը պաշտպանէ . մեր ժողովը Պաղպիոյ աղնուականութիւնը իր գտնուած խոսան վիճակէն սղասելու համար է : Նաև երկար ատեն ձեր բարձրութեան սպատոյն համար համբերեցէք : Նաև երկար ատեն իր ընտանեացը վրայ ունեցած սէրերնիս մեզի երկդիմութեան սահմաններուն մէջ վակեց, Հիմա ամեն բան իմացուեցաւ, Տէր իմ, և Զեր Շարձրութիւնը միտութեան ճշմարիտ ատեանին պիտի ներկայանայ :

սրուն մէկ յառաջաբանն է հիմակուան եղածն :

— Ի՞նչ ըսել կուզէք, պարան դուքս, հարցու, կոմաք ան-
հանգստութենէ ու միանգամայն փառափրութենէ գողա-
լով :

— Տէր իմ, մենք դումարուած ենք, շարունակեց դուքս տը
Ախզ, չէ թէ, ինչպէս Պ. որսորդապետն իմաստնապէս ըստ,
տեսութեամբ միայն մաշած ինդիրներու վրայ խորհելու,
այլ զործնապէս վարուելու : Այսօր, մենք մեզի Գաղղիոյ
ազնուականութիւնը պատուելու ու ճոխացնելու կարող գը-
լուի մը կընտրենք, և ինչպէս սովորութիւն ունէին նախնի
Գաղղիացիք որ երբ գլուխ մ'ընտրէին, անոր արժանի ընծայ
մը կուտային, մենք ալ հիմա մեր ընտրած դլուխին ընծայ մը
կուտանք . . .

Բոլոր սրտերն բարախեցին, բայց չէ թէ դուքսին սրտին
չափ խիստ :

Բայց և այնպէս մունջ ու անշարժ կեցաւ, և իր դեղնու-
թիւնը միայն իր խուզութիւնն յայտնեց :

— Պարոնայք, շարունակեց դուքսը իր ետին դրուած ա-
թուուին վրայէն երկու ձեռքովը բաւական ծանր բան մը վեր-
ցընելով պարոնայք, ահաւապիկ այն ընծան զոր ձեր ամենուն
անուամբը իշխանին ոտքերուն տակ կը դնեմ :

Թա՞զ մը, պօտաց դուքսը հաղիւ թէ ինքզինքը բըս-
նելով, թա՞զ մը ինծի, պարոնայք :

Կեցցէ Վրաննուա Պ. պօտաց ձայն մը որ դողացուց
կամնըը և ազնուականաց սերտ խումբը իրենց սուքերը
քաշած էին :

Ես, ես, թոթովից դուքսը ուրախութենէն և միան-
գամայն վախէն դողալով, ես անկարելի բան : Եղբայրս դեռ-
ողէ, եղբայրս Աստուծոյ օծեալին է :

— Մենք կը հրաժարեցնենք վայն, ըստ դուքսը, սպա-
սելով որ Աստուծած անոր մահուամբը մեր ըրած ընտրութիւ-
նըն սրբագրծէ, կամ լաւ ևս սպասելով որ իր հպատակնե-
նէն մէկը այս փառքէ զուրկ թափառութենէն ձոնձրացած :

Թոյնով կամ՝ դաշոյնովմը Ս.ասուծոյ արդ արութիւնը լնու . . .

— Պարոնայք, ըստ դուքսը աւելի տկարքին, Պարոնայք :

— Տէր իմ, ըստ կարդինալն, ձեր բարձրութեան հիմա
յայտնած ազնիւ տաքնապին այս կը պատասխանենք . Հէնրի
Գ. Աստուծոյ օծեալին է, մենք զայն կը հրաժարեցնենք, ալ
անի Աստուծոյ ընտրեալն չէ, և դուք պիտի ըլլաք . Տէր իմ,
Ահաւապիկ Ռէյմի տաճարին նման պատկառելի տաճար մը .
վան զի հոս կը հանդ չմն Փարիզի տիրուհուոյն, այն է՝ սըր-
բուհոյն գինովախեայ նշխարը . հոս թաղուած է առաջին
քրիստոնեայ թագաւորին Քլօնի մարմինը . ուրեմն, Տէր իմ
այս սուրբ տաճարին մէջ, Գաղղիոյ ինքնակալութեան ճշմա-
րիտ հիմնադրին արձանին դ իմացը ես, Եկեղեցւոյ իշխաներէն
մին, որ առանց յիմար փառասիրութեան կրնամ օր մը անոր
գլուխն ըլլալու յոյս ունենալ, կըսեմ ձեզ . Տէր իմ, ահաւա-
սիկ սուրբ միւռունի աեղ Գրիգոր Փ. Պապէն զրկուած սուրբ
իւղ մը: Տէր իմ, անուաննեցէք ձեր Ռէյմի հանդերձեալ արքե-
պիսկոպոսն, անուաննեցէք ձեր Գոնժէսթապիլը: և մէկ վայր-
կենի մէջ դուք թագաւոր պիտի օծուիք, և թէ որ Հէնրի եղ-
բայրնիւ դ ահը ձեզի չյանձնէ, յափշտակիչ պիտի համարուի:
Ծզայ խորանին չահերը վառէ :

Նոյն միջոցին երգ եցիկ մանուկը, որ յայտնապէս այս հը-
րամանին կապաէք, ձեռքը վագիշովմը տեանդաստունէն դուրս
ելու, և մէկ վայրկեանի մէջ յիսուն չահ խորանն ու դասը
լուսաւորեցին :

Սն ատեն խորանին վրայ ականակուա թագ մը և շուշա-
նազարդ սուր մը տեսնուեցան: Ասի Գոնժէսթապի սուրբն
էր:

Նոյն միջոցին մթութեան մէջէն զոր դասի լուսաւորու-

* Եսի իշխանութեան անուն մ'էր որ երբեմն թագաւորի ա-
ստուգեատութեանը յատուկ եր վերջն ալ վաղղից սասացին բա-
զարագեատութեան : Այսօր քանի մը Տէրութեանց մէջ աւժանեաց
աիտոյոս մ'է :

Թիւնը չէր կրցեր ցրուիլ, երդ և հոնն հնչուեցաւ և օրհնութեան ազօթքն լսեցուց :

Այս երեք Խօրէնցի իշխաննին ձեռքովին եղած բաղդի աւագինկալ փոխութիւն սրուն դուքս ինքնին յոյս չունէր, ներկայ եղողներուն վրայ մեծ տարաւորութիւն ըրաւ : Քանի ջրը փառաւորուեցան, և ակարնին ալ զօրացան :

ՏՎնժու դուքսն գլուխը բացաւ, ու ապահով քայլով մը և հաստատուն բազուկով մը դէպի խորանը գնաց, ձախ ձեռքովը թագը և աջ ձեռքովը սուրը բռնելով դարձաւ դուքսին ու Կարդինալին քով սրոնք յառաջադոյն այս կրկին պատույն կապատէին, և թագը Կարդինալին գլուխը դրաւ, սուրըն ալ դուքսին մէջքը կախեց :

Միաձայն ծափահարութիւններ ողջանեցին այս վճռական գործքն, որ այնչափ չէր սպասուէր իշխաննին տարրամ բընաւորութենէն :

— Պարոնայք, ըստ դուքսը ներկայ եղողներուն, ձեք անտուններն Գաղղիոյ մեծ տիրոջ դուքս ուր Մայէնի տուէք թագաւոր եղած օրս ամենքն ալ առաջին ասպետ պիտի ըւլաք :

Ծափահարութիւնը կրկնեցան, և բոլոր ներկայ եղողներըն հետպհետէ եկան անտուններնին դուքս ուր Մայէնի տուէն :

— Ոհ, ըստ Ելքօ, աղէկ պատեհութիւն կայ կապոյտ երիդ ստանալու, տաննի պատեհութիւն մը ուժիչ անդամ չափանիկ կրնամ գտնել և ըսել որ պէտք է որ անիէ զրկուիմ:

— Հիմա, խորանը գացէք, Տէր արքայ, ըստ Կարդինալ ուր Կիդ:

— Պարօն ուր Մանարո իմ դնդապետս պիտի ըլլայ, Պ. ուր Ռիպէրաք և Պ. ուր Անդրակ իմ զօրագլուխներս, Պ. ուր Լիպէրաք և Պ. ուր Անդրակ իմ առաջադասներս, Պ. ուր Անդրակ իմ տեղապահն. ուստի ասոնք ամենքն ալ դասին մէջ վարո իմ տեղապահն. պաշտօններէն իրաւամբ առաջած տեղերնին նստին :

Ասոր վրայ կոչուղներն գացին նատան իրենց տեղերը որիք օրհնութեան ճշմորիտ արարողութեամբ իրենց տրուեցան :

— Պարոնայք, ըստ դուքսը ժողովոյն մնացորդին կառանութիւն, ամենքը ալ ինձի խոնդիքը մը ուզզեցէք, ես ալ պիտի ջանամ զենք դժուն չընել :

Նոյն միջոցին Կարդինալը տաճարին ետին երթարով քահանայական զգեստներն հագած էր : Աւատի խոկոյն սուրբ սրբուակը ձեռքով դուրս ենելով զայն խորանին վրայ գըրաւ :

Սն ատեն երդեցիկ մամուլին նշան ըրաւ որ աւետարանն ու խոնդ բերէր : Կարդինալը երկուքն ալ առաւ, խաչը առեւ տարանին վրայ դրաւ և զանոնք ներկայացուց ու' Անժու դուքսին, որ ձեռքը վրանին դնելով ըստ :

— Առաջի Աստուծոյ կուխտեմ իմ ժողովուրդիս սուրբ կրօնքը պաշտպանել և պատուել որպէս վայել է Քրիստոնակայ թագաւորի մը և եկեղեցւոյ հարազատ որդւոյ մը : Եւ՝ այսպէս Աստուծոյ ու Աւետարանն ինձ օգնական ըլլան :

— Ամէն, պատասխանեցին միարերան բոլոր ներկայ եղողներն :

— Ամէն, կրկնեց տեսակ մը արձագանք, որ կտրծես եկեղեցւոյ խորերէն կը հնչէր :

Գուքս ար Կիդ, ինչպէս ըստիք . Գօնթէսմթապի պաշտօնները կատարելուն՝ խորանին երեք աստիճանները եւաւ, և տաճարին առջին դրաւ . իր սուրբ, զըր Կարդինալն օրհնեց :

Կարդինալը զանի պատեհանէն հանեց, և բերնէն բռնելով ներկայացուց թագաւորին պնկ որ մեղեխէն բռնեց զայն :

— Տէր արքայ, առեք. այս սուրբ որ Աստուծոյ օրհնութեամբը կը տրուի ձեզի . որպէս զի նոյն օրհնութեամբն ու Հոգւոյն Սրբոյ զօրութեամբը կարենաք ձեր բոլոր թշնամիներուն դէմ դնել, պաշտպանել և պահպանել սուրբ եկեղեցին և ձեզի յանձնուած թագաւորութիւնը : Առեք. այս սուրբ, որպէս զի անոր օգնութեամբ արդարութիւնը ՚ի դործ դներ, որպերն ու այրիները պաշտպանէք և անկարգութիւններն չնվէք . որպէս զի ամէն առաքինութիւններով զենք փառաւորած արժանիք ըլլաք թագաւորել անոր հետ որուն պատկերն էք դուք. երկրիս վրայ, և որ կը թագաւորի չօր և Հոդ-

և ոյն Արքոյ հետ յափուեանս յափտենից :

Դուքսը ծուեց սուրբ անանկ որ ծայրը գետինը դպաւ :
և զանի Աստուծոյ նուիրելէն վերջը՝ տուաւ դուքս ար Կիպի :

Երդեցիկ մանուկը բարձ մը բերելով դրաւ ա՛Յնժու դուքսին առջև որուն վրայ ծնրադրեց :

Եւեոյ կարդինալն պղտիկ ոքանչելի արկղը բացաւ և ոսկիէ առեփի մը ծայրով սուրբ իւղէն կատրմ' առնելով՝ մաղզ մայլն վրայ տարածեց :

Ան ատեն մազվմայն ձախ ձեռքը՝ դուքսին վրայ երկու աղօթք կարդաց :

Աերջը բթամտուվը սուրբ իւղէն առնելով՝ դուքսին դաշտը խաչ մը գծեց ու ըստ :

Կօծեմ ձեզ թաղաւոր սրբալոյս իւղովս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Անմիջապէս երդեցիկ մանուկը ոսկիթել թաշկինակով մը օծումը սրբեց :

Նոյն ատեն կարդինալը թաղը երկու ձեռքով բռնելով՝ թշմանին զլատուն վրայ դրաւ, բայց դլուխը չդրաւ : Խակոյն դուքս ար Կիպ և դուքս ար Մայէն քովը դացին, և երկու կողմէն թաղը բռնեցին :

Աերջապէս կարդինալն միայն ձախ ձեռքովն զանի բռնելով և աջ ձեռքովն ալ իշխանը օրհնելով՝ ըստ :

— Աստուած կը պսակէ ձեզ փառաց ու արդարութեան թագով :

Ետքը թագը իշխանին գլուխը դնելով :

— Առէք այս թագը, ըստ, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :

Տ' Անժու դուքսն, տժգոյն և դողալով, զգաց թաղին դըլուխը դրուիլը և ձեռքը վրան դրաւ :

Երդեցիկ մանուկը զանդակը հնչեցուց և բոլոր ներկայ դոնուղներն զլուինին խոնարհեցուցին :

Բայց շուտով ոտք ելամ և սուրերմին ճօնելով պոռացին : Լեզոյէ թագաւոր Թրամատուս Գ . .

— Տէր արքայ, ըստ կարդինալը տ' Անժու դուքսին, այս սօրունէ Գաղղիոյ կը տիրէք, որովհետեւ Գրիգոր ՓՊ. Պատէնին օծուեցաք, որուն ներկայացուցին եմ ես :

— Զար սատանայ, ըստ Եկո, ինչպէս խոյլ չունիմ վիւզ :

— Պարոնայք, ըստ դուքս տ' Անժու հպարտութեամբ ու վեհանձնութեամբ ուորի վրայ ենելով, չպիտի մոռնամ այն երեսուն աղնուականաց անունները որոնք առաջին անգ ամբ զիս իրենց վրայ թագտուրելու արժանի համարեցին . և առայժմ, Պարոնայք, մնաք բարով . Աստուած իր սուրբ և պատուական պահպանութեամբը պաշտպանէ ձեզ :

Կարդինալն և դուքս ար Կիպ խոնարհեցան . բայց Եկքօ, որ զանոնք կողմանակի կը տեսնէք, տեսաւ որ դուքս Մայէն նոր թագաւորը տարած ժամանակը Լորէնցի երկու իշխաններն հեգնական ծիծաղ մ' ըրին :

— Բէհ, ըստ Եկքօ, աս ի՞նչ կընշանակէ, և ի՞նչ բանի կը ծառայէ կատակն, թէ որ ստենարդ կը նենդէ :

Նոյն միջոցին տ' Անժու դուքսը ստորերկեայ եկեղեցւոյն սանդուխէն վար իշնելով՝ մթութեան մէջ աներեւութացաւ, և բոլոր ներկայ եղողներն հետովհետէ ետեւէն գացին, բայց երեք կրօնաւորներէն որք աւանդատունը մտան, երբ դռնապան եղբայրն խորանին ջահերոյ կը մարէք :

Երդեցիկ մանուկը ստորերկեայ եկեղեցւոյն դուռը վերաներմուն դոցեց և եկեղեցին միայն այն կանդեղով լուսաւորուեցաւ որ միատ անշէջ մնալով, ռասմիկին մէկ անձանօթ նշանակն ու միայն ընտեալներուն դադանի ընդունելութիւն մը յայտնողն կը թուէք :

վերջապէս ծնօտը կլոր և դէմքն ալ կատարեալ ձուածեւ, թէ պէտքի մը տժգոյն որուն վրայ երկու երենեայ աղեղներուն նման կարծես նկարուած երկու յօնք կային :

Ասի Պ. աը Կիզի քոյրն էր, տիկին ոը Մօնքանափէ, որ վտանգաւոր համբարու մ'էր և իր պատիկ թանձը կնկուղին տակ վարպետութեամբ կը ծածկէր այն երկու մարմնոյ պակասութիւններն, որք էին իր մէկ ուսին միւսէն քիչ մ' աւելի բարձր և աջ ուրին ալ թէթեռնեամբ կազ ըլլան :

Այս պակասութիւններուն նկատմանի սատանայի մը հոգին իր մարմնոյն մէջ եկած բնակած էր, բայց Աստուած կը հան հըրեշտականման գլուխ մը չնորհած էր :

Նիքօ իսկոյն ճանչցաւ զանի քանակ անդամներն առողերլից եկեղեցւոյն բանալիին երկու անդամ կղզաքին մէջ գառնալը լինուուն պէս աւանդառունին դարն ելան, մինայն այս անդամ վուսանակ կնկուղի սովորական համգերձներնին հաղած էին :

Նոյն միջնորդն երդեցիկ մանուկը գանոնք անձներան պէտ աշնանի ուրախալից ու համարձակ ծիծալմը փրցուց որ Նիքօյի աշազգելով՝ ան ալ սկսաւ խնդալ առանց պատճառը գիտնալու :

Գուրք ոը Մայէն աստուկապէս սանդուխին մօտենալուլ .

— Ա. Եղասի մեծաճայն մի ծիծազիր, քոյր իմ, ըսաւ, դեռ հիմա գուրք ելան ու կման լսել :

— Երքոյրը, Նիքօ աւանել եւս ըարմանալով, միթէ դիպուածով այդ փոքրահաս կրօնաւորն իի՞ն մ' եղաւ :

Յիբաւի նոր ընծայն կնկուղի ետին ձքելուն պէտ տեսնուեց առ իր հրեշտակային ու զբանչելի կնկան գլուխը զրը Աէօնառ ոը Վէնսի իսկ չլլնար նկարել, թէեւ Ժօքօնոն նկանադ բած ալ է :

Աչքերն սեւ էին և խորամանկութեամբ կը փայէին, բայց երբ բիերն կը ծաւալէին, իրենց երենեայ սկաւառակիները կնդայնէին, և թէեւ պարզը բայց սոսկալի տալաւորութիւն մը կունենային :

Բերանն սքանչելի էր և նուրբ քիթը ճիշդ ուղղութեամբ :

* Բիէմանթէի կոմոն ու ա՛լլէնսոն գուրին մաերին էր, որ Պօլի հետ միտրունեցաւ ա՛լլէնսոն զուբը Շաուլ Թէ ի մայութ նէ եռքը գահը նստեցընելու ի սախտուիս Հենրի Պ. ի և ըստանուեցաւ 1574 իւ. Օ. թ.

— Ոհ, ոհ, ըստ Մայէն, ասի անանկ ճամբայ մ' է որ մեծ
րազնեայ իշխանաց դիւրութեամբ ընդունել չենք կրնար տալ
և միշտ Լուլուէն Աշնթ-Ճէնվիէլի վանքը աւելի մօտ պիտի
ըլլայ, քանիթէ լ' Օթէլ տը Վիյլ պանդոկէն Կուէվի հրապա-
րակը :

Եիքո կը հասկրնար որ ո' Անժու գուքսն ծաղրեր էին. և
որովհետեւ կ' ատէր աս իշխանն, ուստի երեք կրօնաւորներն
իրենց աս ծաղրագործութեանն համար ընդունած էր կամաւ-
բաց ի Մայէնէն, զոր չըր ընդունէր տիկին տը Մօնքանափէի
համար :

— Գործերնիս նայինք, Պարոնայք, ըստ Կարդինալն : Ա-
մեն տեղ գոյ է, այնպէս չէ :

— Ոհ, այո՛, ըստ գքսուէին . բայց մէջմը երթամ նայիմ:

— Զէ, ըստ գուքսը, պարապ տեղը մի յոդնիք, սիրելի
երդեցիկ մանուկս :

— Հաւատոցէք որ ասի իմ ուրախութիւնն է :

— Մայէն, հո՞ս է կըսէք, հարցուց գուքսը :

— Այո՛ :

— Չտեսայ զի՞նքը :

— Աղէկ դիսէր որ պահութանձ է :

— Ո՞ւր :

— Խոստովանապանի մը մէջ :

Այս խօսքերը Յայտնութեան հարիւր հազար փողերուն
նաևն հնչեցին Եիքի ականջները :

— Ավ պահուած է խօստովանապանի մը մէջ, թշուառա-
կան, ըստ Եիքո տէղէն երերալով, ինծմէ զատ ուրիշ մէկը
չեմ տեսներ :

— Ուրեմն ամեն բան տեսաւ ու լսեց, հարցուց գուքսը :

— Խնչուս պէտք, մեզմէ չէ :

— Ինձի բերէք, Մայէն, ըստ գուքսը :

Մայէն գասին սանդուխներուն մէկէն վար իշնելով կար-
ծես իմացածի պէս շխտակ Եիքօի պահութանձ խոստովանա-
քանը դնաց :

Եիքո, թէպէտ քաջ, բայց այս անդամ ակրաները սոս-
կումէն իրարու զարնուիլ սկսան, և պաղ քրտինք մը ճակտէն
ճեռքերուն վրայ կը հոսէր :

— Ոհ, ըստ Եիքո հնկիրէն սուրը կնկուղին տակէն հա-
նելով, չեմ ուզեր անառակի մը նման այս տեղ մեռնիլ: Ծն,
պատրաստուինք մահուան, թշուառական, և որովհեաւ պա-
տեհութիւն կայ, գոնէ մեռցնեմ քեզ քան թէ մեռնիմ:

Եւ Եիքո իր այս քաջապիրս կտէրը կտարելու համար
արդէն սուրին մեղեին ալ գոտած ըլլալով, ճեռքը մէկէն դը-
րանը նիդին վրայ դրաւ, երբ յանկարծ դքտուհին պօռաց .

— Հոդ չէ, Մայէն հոդ չէ. ճախ կողմը, միւսին մէջ :

— Եատ աղէկ, ըստ գուքսը, որ արդէն ձեռքը Եիքօի
խոստովանապանի դունը երկնցուցուցած էր, և իր քրօնը
ցուցընելովը խնկոյն դիմացի խոստովանապանը գնաց :

— Ոհ, ըստ Կապօն հառաջանք մ' արձակելով, ժամա-
նակ էր. բայց ո՞վ կայ նայինք միւս խոստովանապանին մէջ :

— Դուրս ելէք, Պ. Նիքոլա Տավիտ, ըստ մայէն, մինակ ենք:

— Ահաւափկ Տէր իմ, ըստ մորդ մը խոստովանապանէն
դուրս ելնելով:

— Լաւ, ըստ Կապօնն, դուն պակաս էիր, պարօն Նի-
քոլա. ամեն տեղ բնտուեցի քեզ, և ահա վերջապէս չիլն-
ուըռած ժամանակս գտայ :

— Ամեն բան տեսաք ու լսեցէք, այնպէս չէ, ըստ գուքս
ուր կիզ:

— Եղածներէն բնաւ բառ մը չկորմնցուցի, և բնաւ ալ
մոռնալու չեմ, Տէր իմ, անհոդ եղիք :

— Ուրեմն պիտի կընաք ամեն բան Նորին Արդութեան
Գրիգոր ԺԳ. ի պատուիրակին խօսիլ:

— Անխալ և տնապակաս :

— Հիմա Պ. ուր Մայէն եղբայրս ըստ ինձի որ դուք մե-
զի համար սրանցելի բաներ ըրած էք: Տեսնենք ինչ ըրիք :

Կարդինալն ու Դուքսուհին հետաքրրութեամբ քովն ե-
կան: Ան ասեն երեք իշխաններն ու իշենց քայլը խմբեալ

մը կը կազմէին :

Նիքօլա Տավլիս անոնցմէ երեք ոտք հեռու նստած էր,
և կանգեղն ալ աղջէկ մը կը լուսաւորէր զիբենք :

— Խնօր խստացայ, ըրի Տէր իմ, ըստ Նիքօլա Տավլիս,
այսինքն ձեզ առանց հակուակութեան Գտղղիոյ դահը նըս-
տեցընելու միջոցը դայայ :

— Առո՞նք ալ դահը պիտի նստին, ըստ Շիքօ, ըսել է որ
բոլոր աշխարհ Գտղղիոյ թագաւոր պիտի ըլլայ : Առաջինքն
յիտինք :

Կը տեսնուի որ քաջ Շիքօի մորքին մէջ զուարթութիւն մը
ծնած էր, և այն ալ երեք պատճառու .

Նախ՝ որ անակնկալ կերպով մը մօրալսւու վոսանգէ մ'ա-
զատեր էր, երկրորդ՝ որ դաւաճմութիւն մ'իմացաւ . վեր-
ջապէս՝ որ այս դաւաճմութեան մէջ իր երկու մեծ թշնա-
միները կորանցաւնելու միջոց մը կը դանէր, այն է դոքս որը
Սայէն և Նիքօլա Տավլիս փաստաբանն :

— Միրելի Կոռէնֆիօ, ըստ երբ բոլոր իր դաղղափարներն
քիչ մը մորքին մէջ հաստատուեցան, ի՞նչ ընթրիք մը պիտի
տառ քեզ քու կնկուղդ վարձադրելու համար :

— Եւ թէ որ յափշտակութիւն խիստ յանձաւոր է, այս
միջոցէն ետ կենանք, ըստ դուքս որ Կիզ : Չեմ ուզեր
աստածային իրաւակն թագաւորելու բոլոր քրիստոնեաց
թագաւորներն ետիս ձգ ել:

Չեր այդ տարակուանիքը ես ալ խորհեցայ, Տէր իմ, ը-
ստ փաստաբանն, դուքսը ողջունելով և եռապետաց վրայ
աջը մը պտուցնելով : Ես մինակ սրախաղութեան մէջ ճար-
տար չեմ, Տէր իմ, ինչպէս իմ թշնամիներս կրցեր էին համ-
բաւել ձեր վաստաճութիւնը վրայէս բաւնալու համար, ար-
գէն Աստուածաբանական ու օրինակն ուամամիք զարգա-
ցած, քննեցի, ինչպէս կը պարտաւորէի ընելավէկ աստուա-
ծաբան մը և դիսուն օրէնադէտ մը, բոլոր այն տարեգրու-
թիւններն ու կանոնագրութիւնները որք իմ դահստապան-
աւիկն ստիպութեանց վրայ ունեցած սատդութեան իր գո-

րացընեն : Օրինաւորութիւնը շահին ամեն բան շահէլ ըստ
է, և գտայ, Տեալք իմ, որ դուք օրինաւոր ժաւամնդներ էք
և Վալուանեանք ինքնակոչ և յափշտակիչ ճիւզ մ'են :

Այն վատահութիւնը՝ որով Նիկօ ա Տավլիս այս խօսքերը
ըրաւ, տիկին աը Մօնքանսիէի սաստիկ իմդութիւն մը պատ-
ճառեց, և Կարդինալին ու դուքս աը Մայէնի ալ խիստ մեծ
հետաքրքրութիւն մը, դուքս աը Նիկօ տրատում երեսն ալ
զուարթայուց :

— Բայց և այնպէս դժուար է, ըստ որ Կօռէնի գերդաս-
տանն, թէպէտ երեկի, Վալուանեանց թագաւորութիւնը
սուս հանէ :

— Ատի արդէն ստուգուած է, Տէր իմ, ըստ Նիքօլա
Տավլիս իր ըսյն գրապաններէն մազաղաթ մը հանելու համար
կնկուղն հանելով և այս կերպով մեծ սուրի մ'ալ մեղեխը
ցուցընելով :

Գուքսը մագաղաթը Նիքօլա Տավլիտին ձեռքէն առնե-
լով,

— Այս ի՞նչ է, հարցուց .

— Կօռէնի գերդաստանին աղդաբանութիւնը :

— Որոն արմատն է :

— Շարլըմաններ, Տէր իմ :

— Շարլըմաններ, պօսացին երեք եղբարք անհաւատու-
թեան գէմքով մը որ, հաւաստի գոհանակութիւն մը կը պա-
րունակէր, անկարելի է : Լօրէնի առաջին դոքսը Շարլըմա-
նէի ժամանակակից էր, բայց Պաննէ կը կոչուէր և բնաւին
այս մեծ կայսեր աղդական չիք :

— Ապահեցէք ուրեմն, Տէր իմ, ըստ Նիքօլա : Աղէկ կի-
մանանք որ պարզ յանդիմանութեամբ մը անընէլի եղած ու
առաջին գաստորէն ոնչացած ինդիրնելուն չնմանիր իմ դր-
տածու : Չեզի պէտք եղածն երկարանե դտու մ'է, Տէր իմ,
որ գերազ ոյն առեանն ու ժողովուրդը կը պաղեցընէ, և այն
առեն կրնաք մոլոցընել չէ թէ ժողովուրդը, որ ձերն է, այլ
գերագոյն առեանն : Տէսէք ուրեմն, Տէր իմ, ճիշդն այն է .

Տանիե՛ առաջին դուքս Լօրէնի ժամանակակից Շարլ Յանինեի :

Կիւիլպէռ, իր որդին, ժամանակակից Լուի լը Տէպանէնի :

Հէնրի, Կիւիլպէռի որդին, ժամանակակից Շարլ Յովի :

— Բայց, ըստ դուքս ար Կիւլ:

— Քիչ մը համբերեցէք, Տէր իմ, հոն երկանք : Աղէկ մոտիկ ըրէք : Պօնը . . . :

— Այս, ըստ դուքսը, Տանիե՛ երկրորդ որդւոյն Ուխինի դուստրը :

— Լաւ, ըստ փաստաբանն, որո՞ւ հետ ամուսնացաւ :

— Պօնը :

— Այս :

— Գաղղիոյ Լուի Դ, թագաւորին որդւոյն, Շարլ ար Լուինի :

— Գաղղիոյ Լուի Դ. թագաւորին որդւոյն, Շարլ ար Լուինի, կրկնեց Տալիստ, Հիմայ շարունակենք . եզրայը ար Լուինի, Լուի Ե. Են ետև՝ Հիւկ Փարէ անոն յափշտակիչէն Փաղղիոյ դահէն զրկուեցաւ :

— Ոհ, ոհ, ըսին միատեղ դուքս ար Մայէն և Կարդինալին :

— Շարունակեցէք, ըստ դուքսը, այդ տեղ նշոյլ մը կը տեմնեմ :

— Շարլ ար Լուին իր Լօթեռ եզրօրմէն ժառանգեց անոր ցեղը լմնցած ըլլալով. ուստի քանի որ Լօթեռի ցեղը լմնցած է, դուք, Պարոնայիք Գաղղիոյ թագին միակ և ճշշմարիտ ժառանգներն եք :

— Բէ՛հ, ըստ Շիքո, կենդ ամին իմ կարծածէս աւելի թունաւոր է :

— Ասոր ի՞նչ կը կը, եղբայր, հարցուցին կարդինալն ու դուքս ար Մայէն :

— Կըսիմ, պատասխանեց դուքսը, որ դժբաղդաբար

Գաղղիոյ մէջ օրէնքը* մը կայ որ այս բոլոր մեր ենթադրութիւններն կոչնչացընէ :

— Իմ ալ մոքէս այդ անցաւ, Տէր իմ, ըստ Տալիստ գոհ անձնասիրութեան հպարտութեամբ մը . այդ օրէնքին առաջին օրինակն ո՞ն է :

— Ֆիլիպ ար Վալուայի դահակալութիւնը . ինախատինս Անդ զիոյ Եղուարդի :

— Այդ դահակալութիւնը ո՞ր թուականին էր :

Դուքսը ըաւական խորհելին ետեւ :

— 1328ին, ըստ առանց տարակուսելու :

— Այսինքն՝ Հիւկ Փարէի յափշտակութենէն երեք հարիւր քառասունը մէկ տարի և Լօթեռի ցեղին լմնալին երկու հարիւր քառասունը մէկ տարի վերջը: Աւըեմն երկու հարիւր քառասունը մէկ տարիէ իվեր ձեր նախնիքը դահակալութեան իրաւունք ունէին, երբ այդ օրէնքը հաստատուեցաւ: Արդ ամեն մարդ դիսէ որ օրէնքը անցելոյն վրայ ներդործութիւն չունի :

— Վարպետ մարդ էք, պարոն Նիքոլա Տալիստ, ըստ դուքսը զարմացմամբ փաստաբանին նայելով ո՞ն որ հաւատ տի անարդանք մը կը պարունակէր :

— Ասի շատ հանճարէդ բան է, ըստ կարդինալն :

— Շատ գեղեցիկ բան, ըստ Մայէն :

— Զարմանալի, ըստ դքսուհին . ահա թագաւորական իշխանուհի մ'եղայ . Գերմանիոյ կայսր մը ալ ինձի ամենաին կառանում :

— Աստուած իմ, ըստ Շիքո . գիտես որ ևս միշտ աս ազօթքը չեմ մօռնար . «Մի տանիր զմեդ ՚ի փորձութիւն, ոյլ փրկեա զմեդ ՚ի շարէ » :

*Ըստ օրէնքը Աալիք կը գոչուի որ Կողոսի Նուռանաւումէն ետեւ Պաղղիացի զորքերուն բաժնուած երկիրներն կանանց ժառանգելու հրաման չտար, և հետեւ արար զանոնք աթուէն ալ կը զըրդ էւ . զաւ թւ :

Այս ընդհանուր յափշտակութեան մէջ միայն դուքս առ
Կիզ կը խորհրդածէր .

— Եւ ըսել որ ասոր նման վախուսոներ կարեւոր են իմ
հասակո մարդուն, ըսաւ մրմնչելով, Հնադանդ ելէ առաջ խոր-
հրդածենք. ժողովուրդները՝ փոխանակ մարդուս ազնուա-
կանութիւնը իր աշքերուն կամ ից սուրբն ցոլացումներէն հաս-
կընալու, այս տեսակ մագաղաթներուն վրայ կը նային :

— Իրաւունք ունիք, Հէնրի, տասը անդամ: Ու թէ որ
միայն մարդուն երեսը նայելով գոհ բլային, դուք թադա-
ւորաց մէջ թագաւոր կը լայիք, որովհետեւ միւս իշխանները
կըսեն, ձեր քովը ժողովուրդի պէս կերեւին: Բայց գահա-
կալելու կարեւոր բանն, ինչպէս պարոն Նիքօլա Տավիտ ալ
ըսաւ, աղէկ դաս մըն է. և երբ որ յաջնողինք, ան ատեն,
ինչպես դուք ալ բար, մեր տանը ազնուականութիւնն՝ Եւ-
րոպայի միւս ամուսներուն վրայ եղած ազնուականութիւն-
ներն չանշքայըներ:

— Ուրեմն այս ազդաբանութիւնը աղէկ է, շարունակեց
Հէնրի տը Կիզ հառաջելով, և ահաւասիկ երկու հարիւր ոս-
սի սկուտներն զորս տը Մայէն եղայրա ձեզի համար ինձմէ
խնդրեց, պարոն Նիքօլա Տավիտ :

— Ահաւասիկ երկու հարիւր ալ, ըսաւ կարդինալն փաս-
տաբաննն, որուն աշքերը ու բախութեամբ կը փայլէին իր լայն
գրպաններուն մէջ լեցընելով, ձեզի յանձնելիք նոր պաշտօն-
նուս համար :

— Խօսեցէք, Տէր իմ, բոլոր ձեր վսեմութեան հրամաննե-
րուն պատրաստ եմ:

— Զենք կինար ձեզի առաջարկել որ դուք մնէամք այս
ազդաբանութիւնն չառմ Գրիգոր Փ. Պապին տանիք որ այն
ալ իր հաւանութիւնը տայ. քանզի Վատիկանի դռները ձեզի
բանալ տալու համար այնչափ դուռաւոր չէք:

— Աւաճ, ըսաւ Նիքօլա Տավիտ, քաջասիրու եմ, յիրաւի
բայց առողին գերդաստանէ եմ: Ոհ, միայն թէ պարզ ազ-
նուական մը ըլլայի:

— Պիտի լաե՞ս, մուրացկան, ըսաւ Նիքօլու:

— Բայց ազնուական չէք, շարունակեց Կարդինալն. և այս
ալ տարաբաղդութիւն մ'է: Աւրեմն ստիպուած ենք այս պաշ-
տօնը Բիէռ տը Կանտիփի յանձնելու:

— Եւերեցէք, եղբայր իմ, ըսաւ գ.քսուհին վերստին հա-
ւասոփ եղած. Կոսեամիք մնշուշո խելոցի մարդիկ են, բայց
իրենցմէ բնաւ օգնութիւն ու ապահնութիւն չյուսացուիր
իրենց փառասիրութիւնն միայն ինչ ըլլանին կը յայտնէ, և
աւելի Հէնրի թագաւորին քանիթէ ար Կիզի գերդաստանին
հետ կրնան իրենց փառասիրութիւնն դոհ ընել:

— Քոյլս իրաւունք ունի, Լուի, ըսաւ դուքս ար Մայէն
իր սովորական վայրազ ութեամբք. չենք կինար Բիէռ տը Կօն-
տիի վրայ վատահիլ, ինչպէս որ կը վատահինք Նիքօլա Տավի-
տի վրայ որ մեր մարդն է, և երբար մեզի հաճոյ ըլլայ, կըր-
նանք կախել տալ:

Դուքսի այս անկեղծութիւնը, փաստաբանին երեսը կոպ-
տութեամբ արձակուած, խեղճ օրենսդէտին վրայ անսովոր
արդիւնք մը պատճառեց. որով մեծ սոսկում մը յայտնող ցըն-
ցողական ծիծազ մը փրցուց :

— Նարջ եղբայրս կատակ կընէ, ըսաւ Հէնրի տը Կիզ փաս-
տաբանին, և դուք մեր հաւատարիմ մարդն էք, ու այս ալ
շատ գործերու մէջ փորձած ըլլանիդ չէք ուրանար :

— Մանաւանդ իմ, ըսաւ Նիքօլու Ռժնամիին ցուցը-
նելով, ինչպէս նաև Մայէնի ալ:

— Ապահով եղիք, Նարլ, և դուք Գաթէրին ես ամեն ըզ-
դուշութիւն առաջուց ըրած եմ: Բիէռ տը Կօնտի այս ալ-
գաբանութիւնը չուոմ կը տանի զայն միւս թուղթերուն մէջ
խառնելով, առանց իր տարածը գիտնալու: Պապը զայն կը
վաւերացնէ կամ ոչ, առանց Կօնտի անոր հաւանութիւնը կամ
անհաւանութիւնը իմանալու:

Վերջապէս Կօնտի, իր բերածը միշտ չդիմնալով Գաղիւյ
պիսի գայ այս վաւերացնեալ կամ անվաս եր ազգ արանութեամ-
բը: Դուք, Նիքօլա Տավիտ, գրեթէ անոր ճամբայ եղած տ-

առենն կերթաք Շալօն, Լիոն կամ Ավենեօն պինքը կսպասէք, այս երեք տեղերէն մէկը սպասելու համար մեզնէ առած ազգարարութիւններնուող համեմատ: Ասանկով մեր ձեռնարկութեան ճշմարիս գաղտնիքը միայն դուք կիմանաք: Կը տեսնէք որ դուք միշտ մեր վստահութեան արժանի մարդն էք:

Տաղիս խոնարհեցաւ:

Հիմա նայէ, մրմնջեց Շիքօ, սիրելի բարեկամ, սխալ քայլ մառնելուդ պէս պիտի կախուիս: բայց հանդարտէ կերդնում Սրբուհւոյն գենովափեայ վրայ որ հոս ներկայ է գաճեղէն, մարմարեղէն կամ փայտեղէն, կարելի է ոսլեղէն ալ, որ սոյն վայրինիս երկու կախաղաններու մէջ կը դանուիս, բայց քեղի աւելի մօտն, սիրելի բարեկամ, իմ պատրաստածս է:

Երեք եղբայրներն իրարու ձեռք սեղմելով՝ իրենց դք սունդի քոյրն ալ դրկեցին, որ աւանդատունէն իրենց կրօնական պատմուաններն բերած էր՝ վերջը զանոնք իրենց հագցնեէն ետև, ինքն ալ իր կնկուլը աչքերուն վրայ քայեց և անոնց առջեւէն մինչև դասիթը դնաց, ուր գունապան եղբայրն իրենց կազասէր, և Նիքօլա Տալիսոն ալ հետերնին դուրս եւլան, որուն ամէն մէկ քայլին ոսկի սկուտներն կը հնչէն:

Անոնց վրայէն դռնապան եղբայրը կզպաքները դրաւ և եկեղեցին մոտնելով դասին կանդեղը եկաւ մարեց: Խսկոյն թանձ բամած խաւար մը պատեց ըրոլոր մատուռը և Շիքօի այն խորհրդաւոր սոսկումը որ քանի մանդամ' իր վրայ մեծ ազդեցութիւն ըրած էր, կրկին երեւան եւլա:

Յետոյ այս մթութեան մէջ կրօնաւորին սամստալներուն ձայնը սալայաւուկին քարերուն վրայէն հեռացաւ, տկարացաւ ու բոլորովին կրսուեցաւ:

Հինգ վայրկեանի չափ, որք Շիքօի շատ երկար երեւցան, ոչ լութիւնը խռովիցաւ և ո՛չ մթութիւնը լուսաւորեցաւ:

— Լաւ, ըստ Կապօն, կերեւայ որ այս անդամ ամեն բան իրօք լինցաւ, որ երեք արարուածներն կասուարուեցան, և դերաստաններն ալ գացին: Գտնանք ետենուն երթալու, առան-

կով մէկ գիշերուան համար բաւական կատակերգ անք ու նիմ:

Եւ Շիքօ, որ շարժուն շիրիմներն ու բնակուած խոստովանարաւններն տեսնելով ի վեր միտքը դրած էր մինչեւ ըստ եկեղեցւոյն մէջ կենալ, կամաց մը նիգը վերուց, դուռը զգութեամբ հրեց, և ոտքը իր խորշէն դուրս հանեց:

Երդեցիկ մանկան պատաճ ատենն, Շիքօ Նկեղեցւոյն մէկ անկիւնը ներկուած ապակիններուն շրջանակներն մաքրելու յատկացած սանդուխ մը տեսած էր: Բնաւ ժամանակ չկորպնցուց: Զեռքերը երկնյնելով և ոտքերը խոհեմութեամբ յառաջ վարելով, լուելեայն մինչև անկիւնը զնայ, սանդուխը առաւ և տարաւ կարելի եղածին չափ լաւ կերպով պատուհանին կրթնցուց:

Լուսնին լուսովը Շիքօ տեսաւ որ չէր սխալոծ իր նախատեսութեանցը մէջ պատուհանը վանքին գերեզմանատանը վրայ կը նայէր, և անկէ ալ Պօրտէլ փողոցը կերթցուէր,

Շիքօ պատուհանը բացաւ, ծիու պէս նատաւ վրան, և սանդուխը՝ միշտ զբեթէ ուրախութիւնէն կամ փախէն յառաջ եկած զօրութեամբն ու ճարտարութեամբը իրեն քաշելով զայն ներսէն գուրս հանեց:

Վար իջնալուն պէս սանդուխը պատին տակը տնկուած թուփերուն մէջ պահեց, տապանաքարէ տապանաքար անցնելով հասաւ մինչև վերջին փակարանը որ զինքը փողոցէն, կը զատէր, որուն վրայէն անցաւ փողոցին միւս կողմը, քանի մը քար ալ իրեն հետ միաստեղ գետինը տապալելով:

Հնա հասնելով Շիքօ քիչ մատեն կեցաւ աղէկ մը շունչ առնելու համար:

Այսպիսի պիծականոցի մը քանի մը խայթերով դուրս ելած էր ուր շատ անդամ իր կենացը հետ խաղան լաւ իմացած էր:

Վերջը երբ տեսաւ որ աղատօքն թօքերն օդ կառնուն, վազեց Սէն-Փաք փողոցը լա Քօւն տ' Ապօնտանսի պանդոկը, որուն դուռը առանց տարակուսելու ինչպէս առանց յաղագ-

ման զարկաւ :

Պարոն Քլոտ Պօնոմէ անձամբ եկաւ բայցաւ : Ասի ամսանկ անձ մ էր որ դիտէր թէ ամեն անհպտութիւն կը վարձառ քուի , և իր շահը աւելի արտաքիններէն կը յուսար քան թէ սովորականներէն :

Խալոյն ճանչեց Շիքօն , թէպէտ Շիքօ ձիաւոր գուրս ելած , կրօնականի հագուստով կը դառնար :

— Ոհ , դուք էք , աղնուականս , ըստու , բարի եկաք :

Շիքօ անոր սկուտ մը տալով

— Եղբայր Կոռէնֆլօ ի՞նչ կընէ , ըստու :

Պանդոկապետն անմիջապէս մեծաճայն խնդալ մը փրցուց . գնաց դէպի ի խճիկը և դուռը հրելով ,

— Տեսէք , ըստու :

Եղբայր Կոռէնֆլօ ճիշդ Շիքօյի թողած տեղը կը խորդար :

— Թշուառական , ըստու Կասրօն , անտարակոյս եղիք որ մշտական մ'ունեցար , յարդելի բարեկամն :

Գ Լ Ա Բ Ի Թ .

Ի՞շուս Պարու ԵՒ Տեկոն ՏԸ ՍԻՆ-ԼԻՏՔ ՔՈՒ ՔՈՒ ԿՐ ԱՅ-
ԱՎՊԱՐՀՈՒԴԻՒՆ , ԵՒ ՃՄՆԲԱՆ ԸՆԿԵՐԾ ՄԸ ՄԻՇԱՆ

Հետեւեալ առտուն , գրեթէ Կոռէնֆլօի արժնցած առեն որ իր կնկուղին մէջ ըստ մը փաթուած էր , մեր ընթեր ցողն եթէ Փարիզէն Անմէու երթալու ճամբուն վրայ դանուէր , Շառթուի և Նօժանի մէջ տեղը երկու ձիաւոր կը տեսնէր ,

աղնուական մը և իր սպասաւոր մանուկը , որոնց համդարտ ձիւ երն քով քովի կերթային իրարու ոնդունքներն փայփայելով և շոնչով ու խինջմամբ իրարու հետ խօսելով այն պարկեշտ կենդաննեաց նման , որոնք խօսելէ զուրի ըլլանուն համար ուրիշ միջոց գտած չէին իրենց խորհրդածութիւններն իրարու հաշորդելու :

Այս ձիաւորներն առջի օրը մի և նոյն ժամուն գրեթէ Շաթռ հասած էին ծխացանչ և փրկարերան նժոյդներով . այս երակու նժոյդներէն մէկն ալ մայր եկեղեցւոյ հրապարակն ինկած էր և որովհետեւ հաւասացեալներուն պատարագի դացած առենն էր , Շառթուի շինականաց համար շահաւոր տեսարան մ'եղած էր այս ընտիր նժոյդը որ հոգնութեամբ սպառած էր , և որուն տերերը ամեննեին հոգ չէին ըներ վրան , իրը թէ անպիտան ձի մ'եղած ըլլար :

Քանի մը շինականներ տեսած ալ էին , որովհետեւ Շառթռի շինականներն միշտ ամեն բան կը դիտեն , որ ձիաւորաց մեծազ ոյնը պարկեշտ մանկան մը ձեռքը սկուտ մը գնելով անոր հետ լինքն ու ընկերը մօտակայ պանդոկը մոտած էին . և կէս ժամ ետքը երկու ճանապարհորդներն նոր ձիերու վրայ նատած պանդոկին ետեսի գուռնէն գուրս ելան , որնց այտեւը կը փայլէին այնպիսի գոյնով մը զօր անշոշտ իրենց խմած վերը զինւոյ գաւաթին շնորհիւն ստացած էին :

Ցիշեալ ձիաւորներն՝ դեռ մերկ , զ եռ ցուրտ և դեռ գարունն աւետող կապուտակութիւններով զարդարուած գաշոր ելլելնուն պէս , երիցազ ոյնը կրտսելագունին քովն երաթալով թեւերը բայցաւ ու անոր ըստու :

— Միզելի կինս , համդարտորէն ինծի զըկէ ուլ վախուեկ չունինք :

Ան առեն տիկին առ Ան-Լիք , որովհետեւ ճիշդ ան էր , իր փատթուած թանձը վերարկուն բանալով քաղցրութեամբ ծուած էր , և իր երկու բազուկները երիտասարդին ուսերուն վրայ զնելով անոր խնդրած փափուկ և երկար համբոյն տուած էր ,

Սէն-Լիւքի իր կոսջը տուած այս ապահովութենչն և գուցէ տիկին որ Սէն-Լիւքի իրեն տուած համբոյրէն կ'իմացուէր որ նոյն օրը այս երկու ճանապարհորդներն Շառութուէն մինակ չորս մղոն հեռու՝ Քուռ-վիլիլ գիւղաքաղաքին մէկ պղտիկ չորս մղոն հեռու՝ Քուռ-վիլիլ գիւղաքաղաքին մէկ պղտիկ պանդոկը կեցած էին, որն որ իր առանձնութեամբը, կրկին գուռներով և դեռ ուրիշ խել մը յատկութիւններովն երկու սիրակցորդ ամուսիններուն ապահովութեամ երաշխաւորութիւն կուամար:

Հոն բոլոր օրն ու գիշերը կեցան իրենց սենեակին մէջ խիստ դաղտնապէս պահուըրոած, ուր, ճաշերնին ընելէն վերչը լաւ մը փակուեցան պատուիրելով պանդկապետին որ իրենց ըրած երկար ժամբորդութեանը ու անկէ ծագած յոդնութեան պատճեառաւ հետեւեալ օրը լրյաէն առաջ զիրենք չարթնցընէ պատուէր մը որ փութով կատարեեուեցաւ:

Ուստի հետեւեալ օրը կրցանք Պ. և տիկին որ Սէն-Լիւք Շառութուէն Նօֆան սանող ճամբուն վրայ գտնել:

Նոյն օրը, որովհետեւ առջի օրուընէ աւելի հանդարս էր ին, չէ թէ փախառականներու և ոչիսկ սիրահարներու պէս կը ճանապարհորդէին, այլ անանկ դպրոցականներու պէս որոնք ամեն վայրիկեան ճամբայէն կը զարտուղին, իր ձին հեծած արձանի մը նման պղտիկ լեռան մը վրայ ինքզինքնին իրարու հիացներու համար, առաջին շնորհն աւերելով, առաջին հունձքերն հետազոտելով, առաջին ծաղիկներն կորպելով, գարնան պահակերներու նման աներեւութանալու մօտ եղող ձիւնին մէջէն անձններով, և բաղերուն երիխներին փետուրներուն մէջ կամ դաշտէն անցնող ճակարի մը վրայ ցոլցող արեւուն մէկ ճառագայթին վրայ յանհունս ուրախանապով:

— Ճշմարիտ պօտաց հանկարծ Սէն-Լիւք, ո՛չչափ աղէկ քան է աղատ ըլլան: Երբէք աղատ եղած ես, ճան:

— Ես, պատասխանեց երիտասարդ: Անձն ձայնի ուրախանից փայլմամբ մը ո՛չ երբէք: Ես այս առաջին անդամն է որ ու զած օդս և միջոց կառնում: Հայրա կասկածոտ մարդ մ'էր: Երայրս այս տունը կը մնար: առանց կառավարչուհիի մը երա

կու աղախիններու և մեծ ծառայի մը դուրս չեի եներ, անանկ որ բնաւ չեմ յիշեր որ ասանկ մարդագետնի մը վրայ պտտած ըլլամ այն ժամանակէն ի վեր: ուր յիմարաբար և խնդութեամբ Մեռախտորի մեծ անտառներուն մէջ բարի Տիանակախ հետ կը ցատկուէի, տերեւազարդ ոստերուն մէջ այնչափ վազվատելով մինչեւ որ ալ զիրաք չուեմնէինք: Ան ատեն չնշանապառ կանկ կատնէինք եղիկի մը կամ այծեամի մը ձայն առնելով, որոնք մեզմէ վախցած իրենց որդերէն դուրս կ'ենէին, ընդարձակ անտառներուն լութիւնը հաւասար սարսափով մը քննելու թոյլ տալով մեզ: Խոկ դու ամենասիրելի Սէն-Լիւքս, դու հարկաւ աղատ էիր:

— Ես, աղատ:

— Անշուշտ, մարդ մը . . .

— Ոհ, այս, երբէք: Տ Անծու գուքսին քով մեծցած, անկէ Լեհաստան տարուած, վերջը Փարփակ եկած, արքունական տեւողական սովորութեամբ զայն բնաւ զժողելու տոփազուած; հեռացած ատենս հալածուած սա ողբալի ձայնովը որ ինծի անդադար կը դոչէր,

«Սէն-Լիւք, բարեկամն, կը ճանձրանամ: դու ալ եկուք ինծի հետ ճանձրացիր, » ոհ, բնաւ աղատ եղած չեմ: և այս բաճկոնակիը որ ստամբաս կը սեղմէր, և այս արուեստակեալ մեծ փողպասն որ վիզս կը քերթէր, և այս խէժով պնդուած մաղերն որոնք խոնաւութեամբ կը խառնուէին և փոշով կապականուէին, վերջապէս այս գնդասեղներով գլխուս գամուած գդակը, ոհ, բարի ժաման, կարծեմ քեզի չափ աղատ բածած չեն զիս: Ուստի կը տեսներ թէ ինչպէս աղատութենէն օդուտ կը քաղեմ: Փառք Աստուծոյ, ի՞նչ աղէկ բան, և հիմակուան դտած աղատութիւնին ինչպէս ստնակոխ կը նանեք ընել:

— Եւ թէ որ մեզ բռնեն, Սէն-Լիւք, ըստա երիտասարդ կինն անհանդատութեամբ ետին նայելով, թէ որ մեզ Պատմիլ տանին:

— Թէ որ մեզ միատեղ հօն տանին, սիրելի ժաման, վիճակնիս շատ դէշըլլար: ինծի կերւեկ որ երեկ մինչեւ իրիկուն

Յերութենէն բանոտորդկուածի պէս վասկուած մնացինք, և բը-
նաւ չանձրացանք :

— Աէն-Լիւք, մի յուսար, ըսաւ Ժան տխրութեամբ ու-
ղուարթութեամբ խոսն ժայլառով մը, թէ որ մեղ բանեն,
չէմ կարծեր որ մէկտեղ պահեն :

Եւ սիրուն կինը շատ բան խօսիլ ուզելով քիչ խօսիլ կընա-
լուն վրայ կարմիրցաւ :

— Ուրիշն աղէկ պահութոինք, ըսաւ Աէն-Լիւք :

— Ոհ, անհոգ եղիք, պատասխանեց Ժան, այս կերպով
բնաւ վախնալու բան չունիք, և աղէկ ալ պահութոած ենք.
թէ որ ճանչէիք դու Մեռխոտոն ու իր մեծ կալնիները որ
տաճարի մը սիւներուն նման կը բարձրանան երկինքը իրենց
կամար ունենալով, իր անհուն թուփելը. իր ծոյլ գետերն
որ ամառը կամանչ է մժին կամարներու ներքեւ կը հոսեն և
ճեռը մեռեալ տերեներու շրջակոյտին ներքեւ, իր մեծ
ժետին, ցորենի գաշտերն, ծաղկոյտերն, անվախան մարդա-
րետիներն, փոքր աշտարակներն որոնցմէ անդադար հազա-
րաւոր աշտանիներ գուրս կ'ենեն թռչըսելով և փեթակի մը
բայրոտիքը եղող մեղուներուն նման բզզալով, վերջապէս, աս
ամենէն զատ, Աէն-Լիւք, այս վոկրիկ թագաւորութեան
թագուհին, այս Սումիտի պարտեզներու զմայլեցուցիչը, գե-
ղեցիկ աղնիւ և աննման Տիանան, որ ոսկի պահարանի մէջ
եղած աղամանդեայ սրտի մը կը նմանի, զայն պիտի սիրես
Աէն-Լիւք :

— Կրսիրեմ զայն արդէն, ինքը քեզ սիրած է :

— Ոհ, խիստ աղամով եմ որ զիս դեռ կը սիրէ ու միշտ
պիտի սիրէ: Տիանա բնաւ իր բարեկամանթեամսը մէջ վոկո-
խութիւն չըներ: Գիտե՞ս ինչ երջանիկ կեանք պիտի վարենք
այս ծաղկանց և կամաջներու բայմին մէջ որ գարունին պիտի
ժամանի: Կառավարութիւնը Տիանան իր հօրը տունէն յափշ-
տակեց. որեմն պէտք չէ մեզի անհանդիս ըլլալ: Իր հայ-
ըլ ֆրանսուա Ա., ի մէկ մարտիկն էր, որ առաջ որչափ որ կո-
րովի և քաջասիրու էր, հիմա ալ այնչափ ալ տկար է ու մե-

կու մը վկաս չունի, և անցեալին մէջ յիշասակ մ՛ունի Մա-
ռինեանի յաղթող ու Բալիէն յաղթուած ըլլալոն, իսկ ներ-
կայիս մէջ սէր մի ու ապագային մէջ յոյս մ՛ունի, այն է իր
ամենասիրելի Տիանան: Զենք կլմար Մեռխոտօր բնակիլ ա-
ռանց անոր գիտութեանն ու առանց անկէ տեսնուելու: Եւ
թէ որ գիտնայ, լաւ, ան ատեն ալ ձեռքէն կազատինք իրեն
ըսել տալով որ իր Տիանան աշխարհիս ամենագելեցին է,
և Ֆրանսուա Ա. թագաւորն ալ բոլոր ժամանակներուն երե-
ւելի զգաղլուին է:

— Մտիկայ աղէկ պիտի ըլլայ ըսաւ Աէն-Լիւք. բայց կար-
ծեմ մեծ կուիւներ պիտի ըլլան:

— Ինչպէս :

— Պարոնին և իմ մէջ տեղը :

— Խնչու. Ֆրանսուա Ա. թագաւորին համար :

— Ոչ: Ես իր առաջին զօրագլուխը կըլլամ. բայց աշխարհ
հիս ամենագեղցիկ աղջիկը ո՞վ ըլլայ :

— Ատի ես չեմ խորհիր, որովհետեւ քու կինդ եմ:

— Ոհ, ճշմարիս է, ըսաւ Աէն-Լիւք :

— Միորդ բեր սա ապրելու կերպը, իմ ամենասիրելին,
շարունակեց Ժան: Առատուն, անտառներուն մէջ, խորանին
պղտիկ դռնէն, զոր ինքը մեզի բնակութեան համար պիտի
տայ: Կը ճանչեմ այս խորանը. երկու պղտիկ աշտարակները
կուի ԺԲ. ի ատենը շինուած բնակարանով մը իրարու կապ-
ուած, պաշտելի շինուած մը զոր կը պաշտես դու որ ծաղիկ-
ներն ու անկուածոյքը կը սիրես. պատուհաններ, պատուհան-
ներ կըսեմ, որնց հանդարս և ալօտ տեսքը մեծ անտառ-
ներու վրայ կարծակուի որոնք ացէ կրուուելու չափ բարձր
են և որոնց ճամբաներուն մէջ հեռուն եղնիկի մը կամ այժ-
եամի մը արածիլը կը տեսնուի որոնք ամենափոքը ձայնավ
մը գլուխնին կը վերցընեն. վերջը՝ միւս կողմը, ուկեզօծ գաշ-
տերու, կարմիր տանիքներու ու ճերմակ պատերով գիւղա-
քաղաքներու և արեւով փայլած ու պղտիկ նաւակներով լի-
ցուն Լուառին վրայ բացուած տեսարան մը կայ. երեք մղան

Հեռու լիճ մը՝ եղենուաներու մէջ կապուած մակոյկով մը՝ ձիերնիս, շուներնիս, որոնցինվ անոտաներուն մէջ այծեամ ներու ետեւէ կը վաղենք, մինչդեռ ծեր պարոնը իր հիւրերը մոռնալով և հեռուէն լած շամ հաջիններն մտիկ ընելով պիտի ըսէ. Տիանա, մտիկ ըրէ, կտրծես թէ Աստրէ և Ֆիշէթօն որսորդութիւն կընեն :

— Ու թէ որ կորսան, Հայրիկ, սիսոի պատասխանէ ծիւանա, թող տուր որ որսան :

— Աճապարենք, Փան, ըստ Աէն-Լիւք, արդէն Մեռիտոր ըլլալու էի :

Եւ երկուքն ալ իրենց ձիերը խթելով երկու կամ երեք մզն ճամբայ ըրին. յետոյ մէկէն կամի տուն ընդմիւռած խօսակցութիւն մը շարունակելու. կամ գէշ տրուած համբոյր մ'ուղղելու համար :

Այսպէս Շառթռէն Պանս եկան, ուր գրեթէ ապահով ցած, երկու ամուսիններն որ օր մը բնակեցան և հետեւեալ օրը իրենց գտցած երջանիկ ճամբուն վրայ երջանիկ հանդիսան մալ առնելին վերջը՝ հաստատուն կամօք իրիկունը Մեռիտոր համերու որշում ըրին, այն տապատ անտառներուն մէջ որ նոյն ժամանակը Աէպատէն մինչև Եքոմօյ կը տարած ուէն :

